# ՄԱՅԻՍ



№№ 5—6 ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1893

# Ա Զ Բ Ի Ւ Ր

## № № 5—6


Հայր մեր (Անդրսէնի) . . Սբինդ
Ա զ բ ու բ (ոտանաւոր) . . . Յովհ. Թումանեանց
Զ ա բ ու թ ե ա ն տ ե ղ՝ բ ա բ ու թ իւ ն . Արշ. Մեհրաբեան
Զ ա բ մ ա ն ա լ ի Շ ե բ ա մ . . Տ. Ումիկ.-Պաւթեանց
Գ ա բ ա տ ա ն (ոտանաւոր) . . . Յար. Թումանեանց
Ե բ կ ու տ օ ն ա ծ ա ո (Աննենակայից). Օր. Մ. Սերեբրեակեան
Շ ու չ ա ն ն ի ր . . . . Ա. Խահակեան


## ԴԻՏԱԿԱՆ ՋՐՈՅՑՆԵՐ

Կ ե ն դ ա ն ի ն ե ր ի ա չ խ ա ր հ ու մ, VI վ. Լունկեվիչ և Կ. Գիւլնազարեան

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Զինայինների կեանքից։ Հովանոց չինող կապիկներ։ Անասուններըդօրքի մէջ։

## ՁՈՒԱՐԹԱԼԻՔ

Հանելուկներ։ Մի հատարակ թուաբանական խնդիր։ Թէ ինչպէս պէտք է լցնել լաժակը զանազան հեղուկներով։ Բառախաղ։ Մի վարժապետի դասը իր աշակերտին։ Փայտեայ օրացոյցներ։

Նախընթաց № 4-ի բացատրութիւնը։

# Ա Ղ Բ Ի Ւ Ր

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՅՈՒԼԻՈՒՍ ԾՈՎ

*Դաստիարակների համար*

---

***ՏԱՄՆԵՄՔԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ***

---

№№ 5—6

ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ

ԹԻՖԼԻՍ

Тип. Груз. Изд. Т—ва. | Տպարան Վ.բաց. Հրատ. Ընկ.

1893

Дозволено цензурою. Тифлисъ, 25 Іюня 1893 года.

# «ՀԱՅՐ ՄԵՐ»

## ԼՈՒՍՆԻ ԶՐՈՅՑՆԵՐԻՑ

(Անդերսէնի)

Ես շատ սիրում եմ երեխաներին, ասաց լուսինը—այդ ճուտիկներին: Ես շատ անգամ դիտում եմ նրանց իրանց ննջարանում, երբեմն ներս եմ սլքում պատուհանով և վարագոյրի տակից նայում այն ժամանակ, երբ նրանք իսկի ինձ վրայ չեն էլ մտածում: Շատ հետաքրքրական է տեսնել նրանց չարչարանքը, երբ նրանք գնում են քնելու, հանելու իրանց շորերը. ահա տեսէք, երեսացին նրանց տկլոր ու փոքրիկ ուսերը և ապա թաթիկները, որ կամաց կամաց հանում են շապկի թևքերից. ահա և նրանք քաշում ու հանում են իրանց գուլպաները և իսկոյն երևում են տոտիկները, այնքան սիրուն և գեղեցիկ, որ իրանց-իրանց մօտենում են մարդուս շրթունքներին... և ես

պահպանում եմ այդ տոտիկները», աւելացրեց լուսինը:

«Այսօր երեկոյեան... այո, արժէ պատմել, հէնց այսօր ես նայեցի մանուկների ննջարանի պատուհանից: Վարագոյրները դեռ ցած չէին թողել, և ես ամեն բան տեսնում էի: Իմ շողքերն ընկան այդ դրուստ որ քոյր ու եղբայրների մրջնանոցին: Այնտեղ մի աղջիկ կար, որ հազիւ թոթովում էր և միւսներից պակաս չը գիտէր «Հայր մերը», և մայրը ամեն երեկոյ նրա մօտ նստում էր մինչև նա կ'աղօթէր, յետոյ համբուրում էր՝ ու այնքան սպասում էր մինչև որ նա կը քնէր. նա էլ երկար չէր սպասում, շուտով երեխայի յոգնած աչիկները փակւում էին: Այսօր երեկոյեան, երեխաները մի քիչ աղմկում էին, գժուլթիւններ անում: Ամենափոքրը թըռչկոտում էր մի ոտի վրայ՝ իր երկար գիշերային շապիկը հագին, իսկ մեծը ծուլ էր եղել մի բարձր աթոռի վրայ, և ինչ-որ իրան համար ներկայացնում էր, թէ ինչ՝ թող իրանք գլխի ընկնեն հասկանան. այդ խաղն ինքն էր հնարել. լաւ խաղ է... Միւսները ինչպէս վայել է խելօք երեխաներին, կարգին իրանց խաղալիկները պահում էին պահարանում, այդ շատ դովելի է, լաւ էին անում նրանք, բայց նրանց ննջարանում էլի աղմուկ էր բարձրանում: Մայրը՝ ինչպէս միշտ՝ նստել էր ամենափոքր աղջկայ

անկողնի մօտ և խնդրել երեխաներին որ խե-
լօք կենան, մինչև որ նա կվերջացնէր «Հայր
մերը»: Ես տեսայ ինչպէս լամպի լոյսը հանգը-
րին: Փոքր աղջիկը չոքել էր անկողնում՝ սպի-
տակ բարակ շապիկը հագին. նրա փոքրիկ դէմ-
քը վառւում էր ուրախութիւնից. այդ ժամա-
նակ նա կրկնում էր աղօթքի խօսքերը և թա-
թիկներով երեսը խաչ հանում, բայց մայ-
րը աղօթքի կիսում նրա խօսքը կտրեց. «Մեր
ամենօրուայ հացը այսօր էլ տուր մեզ... և էլի
ինչ աւելացրիր»... Աղջիկը տագ արաւ: «Դու
պարտաւոր ես կրկնել, ասա մի տեսնեմ», ա-
սում էր մայրը. աղջիկը նայում էր նրան շփո-
թուած. «Մի բարկանալ, սիրելի մայրիկ». թո-
թովում էր նա. «ես մէկ էլ խնդրեցի Աստու-
ծուց՝ վրան էլ մի քիչ կարագ»:

ՍՐԻՆԴ

# ԱՂԲԻՒՐ

Ամառանջուամ, ժայռի տակ
Ջուր էր բղխում սառնորակ
Եւ ցրուելով խոտերում
Իջուր ճահիճ էր գառնում։

Նրա առջև մի խոր գուշ*)
Շինեց հովիւն ու տարաւ,
Ջայն ածելով փաղաքուշ,
Ջրեց հօտը իր ծարաւ։

Պախրէն անցաւ այն սարից
Շոգից հանած չոր լեզուն,
Կուշտ կուշտ խմեց աղբիւրից
Ապա նայեց Աստղծուն։

Անցուդարն եկաւ տօթակէզ,
Սառն աղբիւրը որ տեսաւ՝
Գլխաբին առաւ ու չոքեց,
Խմեց սիրտը հովացաւ։

Ապա թէ իր օրհնանքը
Մաղթեց մարդը այն բարի.
—Ֆո շինողիդ օր-կեանքը
Ջըրի նման երկարի։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

*) Գուշ—փոս։

# ԶԱՐՈՒԹԵԱՆ ՏԵՂ—ԲԱՐՈՒԹԻՒՆ

## I

Երբ որ թռչունները սկսում են բունաւորուել, ձու ածել ձագուկներ հանելու, երեխաները իրար հետ խօսք մէկ արած՝ դիմում են անտառները խեղճ թռչունների բները քանդելու:

Կարծես նրանք մի առանձին բաւականութիւն են զգում, փայփայանքով շինած, բրդով ու մամուռով հիւսած բները կործանելու: Նրանք բնաւ չեն խղճահարւում, երբ տկլոր տկլոր ձագուկները բնից հանում են, մինչդեռ մայրերը սոսկալի ժվժվոցով բիչ է մնում նրանց աչքերը հանեն: Բայց ի՞նչ կարող են անել այդ թոյլ արարածները, մինչև վերջին ոյժը մաքառում են չար երեխաների արարքների դէմ և ապա ուժասպառ լինում, մնում պռշկած, երբ տեսնում են բոյնը քանդուած, քաղցրիկ ձագուկները յափշտակած:

Թռչունների ձագերից շատ քչերն են ընտելանում երեխաների փայփայանքներին. շատե-

*ըը առանց իրանց մօր խնամատարութեան, սատակում են, չեն դիմանում որբութեան: Թէև երեխաները շաքարեղէնով անգամ հիւրասիրում են նրանց, բայց ողորմելի ճագուկները խիստ լաւ զգում են օտարի կոշտ խնամատարութիւնը. նրանք իմանում են որ կերակրողը, գուրգուրողն իրանց մայրը չէ...*

*Թռչուններից միայն ագռաւը, կաչաղակը, մոշահաւը (սարեակը) և տատրակը (վայրի աղաւնի) կարողանում են տանել որբութիւնը: Նրանց եղէգ լաւ կերակրում են, քաղցած չեն թողնում, իրան ժամանակին ջուր են խմացնում, ապրում են և շուտով շահանում են, թեւակաւում: Ինչքան երեխաներն աշխատում են, նրանց մեծացնում են, հէնց որ տատրակը կամ կաչաղակը թեւեր ունեցաւ, զգում է իրան ազատ և թռչում է դէպի սիրուն լեռներն ու դաշտեր:*

*Մարդիկ էլ լաւ իմանալով այդ բանը, հէնց որ ղրանք շահանում են, մկրատով խուզում են թեւերը: Խեղճերն էլ որքան կարտած թեւերին թափահարում են, ծուլ են լինում դէս, ծուլ են լինում դէն, տեսնում են չեն կարողանում թռչել, մնում են սառած կանգնած: Բայց միւս նոյն ժամանակ շուտ-շուտ իրանց թեւերը քսքսում են, մսքրում, որ շուտով թեւերն աճեն, մեծանան, փախչելու համար: Նրանք*

վիմ. մեսթիա

**«ԱՂԲԻՒՐԻ» ԱԼԲՈՄ V**

ՕԶԸ ԵՒ ԴԵՂԶԱՆԻԿՆԵՐԸ («ԱՂԲԻՒՐ» №№ 5–6, *Էրեւ* 204).

*Հէնց նոյն իսկ իրանց կարճ թևերով թըռչում են փոքրիկ տարածութիւն, շատ անգամ թագչում են տախտերի տակ կամ մօտակայ պարտէզներում, խոտերի մէջ։ Բայց նրանց կըռկլին բռնում են և աւելի պատժում, թևերն աւելի կարճացնում։ Իսկ խեղճ բանտարկեալները բնաւ իրանց յոյսերը չեն կորցնում, շուտ շուտ աղալում են իրանց անողորմ կտրտած թևերը և սպասում նրանց աճելուն...*

*Ահա այդպէս թռչունների ձագեր էին պահում Աշոտն ու Վահանը։ Նրանք իրանց ձեռքով շինում էին վանդակներ ծառերի մատաղ ճիւղերից թռչունների ձագերին նրանց մէջ պահելու համար։ Նրանք թէև լաւ գիտէին որ այդ ձագերը թևեր չունեն որ փախչեն, բայց զըլխաւորապէս այդպէս վարւում էին, որ կատուները—թռչունների այդ ոխերիմ թշնամիները—չուտեն, չըյափշտակեն նրանց։*

## II

Ի օր Աշոտն ու Վահանը, առաւօտը ճաշնապարհ ընկան անտառ թռչունների ճագեր բերելու։ Ճանապարհին նրանց միացան մի քանի ուրիշ մանուկներ ևս, որովհետև դրանք էլ վանդակներ ունէին պատրաստի։

—Անցեալ տարի, ասաց Աշոտը, ես—տատրակի ճագեր էի պահում, այս տարի ուզում եմ դեղձանիկ պահել, ձեզանից ոչ ոք դեղձանիկի բնի տեղ չի՞ իմանում։

—Ես էլ սրտով ուզում եմ դեղձանիկ, բայց չի ճարւում։ Աղանց Մեխոն էն օրը մի բնի տեղ էր արել և ինձ էլ նշանով տեղը ցոյց էր տուել, բայց երէկ գնացի տեսայ, շահացել թռուել են, պատասխանեց երեխաներից մէկը։

—Դեղձանիկը ծառի ամենաանմատչելի տեղն է իր բոյնը դնում, շատ դժուար է ամեն ծառ բարձրանալ և նայել ճիւղերին. խօսեց երեխաներից մէկը։

—Եթէ այդպէս անենք՝ այդ ոուր կըգնայ, իսկի մի քանի ծառի էլ չենք կարող նայել, վրաբերեց Վահանը։

—Դու ուզում ես՝ էդպէս մի անիլ, ես ուզում եմ անպատճառ դեղձանիկի ճագեր պըտնել։ Ամբողջ անտառը ոտիս տակ պէտք է տամ, ասաց զայրացած Աշոտը և քայլերը արագացրեց։

Միւս ընկերները ականջ չհետևեցին նրան։

Երեխաները ցրուեցին անտառի մէջ։ Նրանք մէկ բաժանւում էին իրարից, մէկ մօտենում։ Ինչպէս առաջուց վճռել էին՝ «Հաճարկուտի» աղբիւրի մօտ հաւաքուեցին, պանր ու հացը առնուշ արին և վրան սառը ջուրն օխայ անելով խմեցին։ Օրը կիսուել էր, բայց մեր երեխաները դեղձանիկի ճագեր չէին ճարել։ Ընկերներից միայն երկուսը մի տատրակի բոյն էին գտել, լսպոր լսպոր ճուտերը հանել, փեշերումը դրել։

—Վա՛յ ազի-ջան,—յանկարծ Վահանը վախեցած ընկերների մօտ վազեց։

—Ի՞նչ է, ի՞նչ է—շրջապատեցին նրան երեխաները։

—Այ, հրէս այս ձորի այն կողմը մի օձ ուզում է դեղձանիկի ճուտերն ուտի, խեղճ ծնողները հաւաքուել ճիճւում են։

—Եկէք, եկէք գնանք ճուտերին թափենք, մեղք են, ասաց Աշոտը և գլխարկը մի քիչ յետ քաշեց և համարձակ ճակատը բաց արեց։

—Վի՛ր վի՛ր, կարալ չենք, ետ կըկենայ օձը ու մեզ կըկծի, վախեցան երեխաներից աւելի փոքրերը։

—Դուք կուզէք եկէք, կուզէք մի՛ք գալ, ձայն տուեց Աշոտը և համարեա վազել սկսեց։ Միւսներն էլ նրա արածից սիրտ առան և հեթ-եթալով դէպի ձորը վազեցին։

Եւ ճշմարիտ նրանք տեսան մի սպիտակ —նախշուն օձ, որ պլուխն արդէն մօտեցրել էր ընկին և բերանը բաց արել, որից սև ու բարակ լեզուն նետի արագութեամբ ներս ու դուրս էր անում: Նա երկարումէկ փաթաթուել էր ծառին, և բոլոր ոյժով կռւում էր մի խումբ դեղձանիկների հետ, որոնք նրան թևերով հարուածում էին և չէին թողնում ձագերին մօտենան: Օձը դեղձանիկներից մի քանիսին թունաւորել էր, որոնք երեսի կամ փորի վրայ ընկել էին ծառի փեչակում և կլափին էին տալիս, իսկ միւսները մնձն աչքի տակ առած՝ ողորմելի ճիճվոցով կռւում էին օձի հետ:

Երեխաների սիրտը շարժուեցաւ այս տեսարանից: Նրանք «քարապրանուկ» ասելով փեշերը քարերով լցրին և սկսեցին օձի վրայ արձակել:

Օձը ահաբեկուած մի քանի հարուածներ ղպաց... Երեխաները շարունակ «քարապրանուկ» էին անում: Օձը տեսաւ՝ չէ, հարուածներն աւելի ուժգին էին կրկնուում, սկսեց ընկից յետ դառնալ, թուլանալ:

—Հիմայ էլ պլսէ՛ն, պլսէ՛ն, կանչեց Աշոտը և երեխաները սկսեցին քարերը օձի պլսին վրատալ: Եւ ահա մի սուր քար օձի պլուխը ծակեց. օձը երերաց և ծառից «թրը՛մի»՝ դետ-

նին ընկաւ: Երեխաները կարծեցին թէ օձը փախաւ, բայց տեսան որ ծառի տակ ընկած է և բուդի-բուդի—թաւալգլոր է գալիս՝ մօտ վազեցին: Օձը թէև դեռ կենդանի էր, բայց բոլորովին շշմուած էր. Աշոտը վերցրեց մի մեծ քար և ջախջախեց օձի գլուխը:

—Հը՞, ինչպէս է, որ ասում էի եկէք... տեսաք ինչպէս ազատեցինք խեղճ դեղձանիկի ճուտերին օձի ձեռքից, ասաց Աշոտը ուրախացած, որ փոխանակ դեղձանիկի ճուտերին տանելու, ազատեց նրանց թշնամի-օձից...

ԱՐՇԱԿ ՄԵՀՐԱԲԵԱՆ

# ԶԱՐՄԱՆԱԼԻ ՇԵՐԱՄ

## I

Լուսիկն ապրում էր իր մօր հետ քաղաքում, որոնց տան կից գոնուում էր մի փոքրիկ և գեղեցիկ պարտէզ։ Այդ պարտիզում կային շատ ծաղիկներ ու պտղատու ծառեր՝ բալի, ծիրանի, տանձենի, նաև սպիտակ թթենիներ և այլն։ Լուսիկն ամենից շատ սիրում էր թթենիները, որովհետև դրանք միւսներից աւելի շուտ էին տալիս հասուն ու քաղցր պտուղներ. և որովհետև ծառերը շատ մեծ ու բարձր չէին, այդ պատճառով էլ պտուղները քաղելը շատ հեշտ էր լինում։

Տանը թուրթ ոչ ոք չէր սիրում. Լուսիկի բախտը բան էր անում, ինչքան քէֆը տալիս էր, անուշ էր անում։ Ախտոս միայն, որ հատիկները շատ հիւթալի լինելով, ապականում էին ձեռքերը, կեղտոտում սպիտակ գոգնոցն ու շորերը, որոնց համար էլ մայրը յաճախ բարկանում էր վրան։

Բայց ինչպէս կարելի էր չուտել, երբ այնքան համեղ էին ու այնքան էլ ցած էին կախուած, որ կարծես թէ իրանց-իրանց էին համեցէք լինում փոքրիկ բերանին։

Եւ բերանը սիրով բացւում էր նրանց համար. այսպիսով Լուսիկը կուլ էր տալիս յաճախ մէկը միւսի ետևից՝ մոռանալով գոգնոցի ու զարդարանքների մաքուր պահելու հոգսը։

Զարդարուել շատ էր սիրում Լուսիկը. նրան շատ էր դուր գալիս իր նոր գլխարկը, նամանաւանդ վարդագոյն ժապաւէնները, որոնցով զարդարուած էր գլխարկը։ Հէնց առաջին անգամ, երբ նա տեսաւ այդ ժապաւէնները, բոլո-

րովին հիացաւ. նա չէր կշտանում նրանց նայելուց, տնտղելուց և մօրը շարունակ հարց ու փորձ անելուց՝ թէ ո՞րտեղից են ստացւում այդ գեղեցիկ ժապաւէնները, և ի՞նչից են պատրաստում։

Մայրը մի անգամ նրան պատմեց՝ թէ ժապաւէնները պատրաստում են մետաքսից, իսկ մետաքսը տալիս է շերամը։

—Ի՞նչ, շերամը. հա՛, հա՛, հա՛... սրտանց քրքջաց Լուսիկը, կարծելով՝ թէ մայրը հանաք է անում հետը՝ որ իրան գլխից հեռացնի, և այդ պատճառով էլ այլ ևս ոչինչ չըհարցրեց, վազեց իր տիկինների մօտ։

Մայրը նկատեց, որ աղջիկը հանաքի տեղ ընդունեց սակայն ոչինչ չասաց, այլ միայն մտածմունքի մէջ ընկաւ։

Կարնանայինն տաք օր էր. հէնց էն էր, որ պատրաստւում էր պարտէզ վազելու, յանկարծ տեսաւ մօրը, որը սերմերով ծածկուած մի թուղթ ձեռքին՝ մտաւ սենեակը։

Մեր Լուսիկը մօր ձեռքի թուղթը տեսնելուն պէս՝ մի ակնթարթում թռաւ դէպի մայրը գոչելով. «Այդ ի՞նչ է, մայրիկ, հը՞, ի՞նչ ես բերել, տեսնեմ, հապա տեսնեմ...» Եւ առանց սպասելու մօր պատասխանին, տիկինների ծայրերի վրայ բարձրանալով՝ իր փափկիկ ձեռքերով բռնեց մօր ձեռքը, քաշեց դէպ իրան, նայեց ու կոտրած սրտով բացագանչեց. «Է՛հ, խաշխաշ է... ես էլ հէնց իմացայ մի լաւ բան է»։

—Հապա մի լաւ նայիր, խօսեց մայրը, գուցէ խաշխաշ չէ։

Լաւ տնտղելով՝ Լուսիկը նկատեց, որ լիրաւի, սերմերը բոլորովին կլոր չէին, ինչպէս լինում են խաշխաշի սերմերը, բայի դրանից մէջ տեղից սեղմուած էին, այն ինչ խաշխաշի սերմերն այդպէս չեն լինում։

—Բաս սրանք ի՞նչի սերմեր են, հարցրեց նա։

—Սրանք ձուաններ են, սերմեր չեն։

—Ա՜խ, մայրիկ, դու միշտ կատակ ես անում. ես տեսել եմ շատ ձուաններ՝ և՛ հաւի, և՛ բադի, և՛ սագի և ուրիշ

շատ թռչունների, նրանք բոլորովին այդպէս չեն լինում, ինչու՞ ես խաբում։

—Այդ նրանից է, սիրելիս, որ դու միմիայն թռչունների ձուանները ես տեսել, իսկ թիթեռների ձուանները չես տեսել։

—Ի՞նչպէս. թիթեռներն էլ են ձու դնում... դրանց ձուաններից ի՞նչ է դուրս գալիս։

—Այդ ժամանակին ինքդ կըտեսնես. դեռ այժմ տանենք ասլակեալատ պատշգամբը, դնենք արևի տակ՝ մի յարմարաւոր տեղ, որ լաւ տաքանան։

Լուսիկը դնաց մօր ետևից. մէկ անգամ էլ տնտղեց այդ զարմանալի ձուանները և վազեց պարտէզ, ուր արդէն բողբոջում էին ծառերը։ Պայծառ արևն ու երգեցիկ թռչնակները միանգամայն գրաւեցին նրան. նա իրան շատ ուրախ էր զգում։ Երկար ժամանակ վազվզում էր պարտիզում. վազեց և բակը, ուր թուխսը իր վաւիկները շուրջը խմբած՝ քթթուռթ էր անում։ Վերադարձաւ սենեակ այն ժամանակ միայն, երբ բոլորովին յոգնեց ու քաղցեց։ Բայց նախ քան նախաճաշի նստելը՝ կրկին յիշեց ձուանները և վազեց տեսնելու։

## II

Ձուանները դեռ անշարժ ընկած էին թղթի վրայ։ Նա սաստիկ հետաքրքրւում էր իմանալու՝ թէ ի՞նչ պիտի դուրս գան այդ մանրիկ սերմերից, հէնց այս պատճառով էլ հետևեալ առաւօտ՝ շորերը հագնելուն պէս՝ շտապով վազեց նրանց մօտ. բայց ի՞նչ... Հէնց որ մօտեցաւ, իսկոյն նկատեց սև ու թաւ մազերով ծածկուած մանր որդեր։

Նրանց մօտ թափթփուած էին իրանց թափանցիկ պատեանները՝ ձուանների կեղևները, որոնցից դուրս էին եկել որդերը։ Բայց դեռ բոլոր որդերը չէին դուրս եկել. ձուանների մի մասը դեռ նոյն դրութեան մէջ էր ինչպէս նախընթաց օրը, իսկ միւս մասից արդէն դուրս գալու վրայ

էին. ձուանների կողքերից անցքեր էին բաց արել ու դուրս սողում։

Լուսիկը դեռ բոլորը լաւ չըգնահատ՝ շտապեց մօր մօտ։

—Մայրիկ, մայրիկ—կանչելով ներս վազեց սենեակը. արի, շուտ արի մի տես ինչեր են դուրս եկել ձուաններից։

Բռնեց մօր ձեռքը և տարաւ դէպի պատշգամբը։

—Գիտես, մայրիկ, ես կարծում էի որ այդ ձուաներից փոքրիկ թիթեռներ պիտի դուրս գան, բայց որդեր են դուրս եկել, այդ ինչպիսի բան է։

—Մի շտապիր, աղջիկս, շուտով հերթը կըհասնի և թիթեռներին. իսկ հիմա դեռ վազիր պարտէզը, քաղիր թիթեռու տերևներ ու բեր։ Դու խօ գիտես, որն եմ ասում։

—Գիտեմ, գիտեմ. բայց ինչի՞ են պէտք տերևները։

—Իսկոյն կըտեսնես, բայց դեռ վազիր, շուտ արա՛, ուշացանք, թէյ պիտի խմենք. ինքնաեռը վաղուց պատրաստ է, թէյը ուշացաւ։

Աղջիկը գնաց և շուտով վերադարձաւ՝ թիթեռու թարմ ու կանաչ տերևներ բերեց։

Մայրը վերցրեց մի քանի տերև և դրեց որդերի առաջ։ Նրանք շատ շուտով զգացին տերևների հոտը, մօտեցան և սկսեցին ախորժակով ուտել։ Լուսիկի շատ դուրն եկաւ այդ. այլ ևս ձեռք չէր վեր առնում. շարուն-շարուն դարսում էր թարմ տերևները և ուշադրութիւնով նայում – ականջ չըդնելով մօրը, որ անդադար կանչում էր՝ թէ՝ արի, թէյ խմենք։ Երբ նա վերջապէս դուրս եկաւ սենեակ գնալու, մայրը յայտնեց նրան, որ այսուհետև պիտի դրանց կերակրել օրը մի քանի անգամ.—Արդեօք չէս մոռանալ այն, հարցրեց նրան։

—Ա՛խ, ոչ, մայրիկ, մի՛ անհանգստանար. ես արդէն սիրեցի իմ որդերին, չեմ թողնիլ, որ քաղցած մնան։

Նա կատարեց իր խոստումնքը, և առաջին անգամները այնքան տերևներ էր բերում, որ աւելորդ էլ մնում էր։ Նրա շատ դուրն էր գալիս երբ որդերը խշխշացնելով ուտում էին տերևը. պատահում էր երբեմն, որ փորձի համար

բերում էր ուրիշ տերևներ ևս ,բայց իր փոքրիկները (այդպէս էր անուանում Լուսիկը նրանց) բոլորովին չէին մօտենում այդ տերևներին և մօտենում էին մխիթարն թթենու տերևներին։

Մի անգամ էլ Լուսիկը բերեց թարմ տերևներ և դրեց առաջուայ տերևներից քիչ հեռու—նրանց կողքին։ Թարմ տերևի հոտն որ զգացին որդերը, իսկոյն սողացին դէպի այն կողմը։ Այդ միջոցին Լուսիկը կարողացաւ նրանց առաջուայ տեղը մաքրել ու խոտակել։

Այսպէս շարունակուեց հինգ օր։ Լուսիկը թէև ուրիշ գործեր էլ ունէր, բայց համարեա թէ մոռացել էր. էլ ոչ պարտէզ էր գնում՝ ծաղիկներին նայելու, ջրելու, ոչ տիկիններին էր տանում զբօսեցնելու—ինչպէս առաջ անում էր, այլ միմիայն զբաղուած էր իր որդերին նայելով. նա գիտէր, որ եթէ նրանց չմկերակրէր, նրանք քաղցած պիտի մնային, այդ պատճառով էլ թարմ տերևներ էր՝ որ կրում էր շարունակ կողովներով։

## III

Որդերը շուտ-շուտ ուտում և շուտ-շուտ էլ մեծանում էին, դրա հետ միասին գոյներն էլ փոփոխում էին. առաջուայ սև գոյնը փոխել, շագանակի գոյն էին ստացել։ Վեցերորդ օրը՝ առաւօտեան վաղ, երբ Լուսիկը գնաց որդերին նայելու, սաստիկ վախեցաւ. նա տեսաւ, որ նրանց մեծ մասը գլուխները վեր ցցած՝ անշարժ ընկած են, ոչինչ չեն ուտում։ Իսկոյն վազեց մօր մօտ և արտասուալի աչքերով ասաց.

—Ա՜խ, մայրիկ, բոլոր որդերս, կարծես սատկոտել են. ի՞նչպէս լաւ էի նայում, ի՞նչպէս պահպանում. միշտ կերակրում էի, երբէք առանց թարմ տերևների չէի թողնում։

Մայրը նայեց որդերին ու պատասխանեց.

—Հանգստացիր, հոգեակս, դրանք բոլորեքեան կենդանի են, միայն մի քիչ քնել են ուզում։

—Ի՞նչպէս, բա ինչո՞ւ առաջ այդպէս չէին քնում։

—Ա՛յ, լսի՛ր, թէ բանն ինչումն է։ Դու խօ չիշում ես, թէ դրանք առաջ որքան մանր էին. քիչ ժամանակամիջոցում այնքան մեծացան, որ այժմ դրանց շապիկը՝ դրսի մաշկը նեղացել է. այլ ևս չեն կարողանում մէջը տեղաւորուել։ Եւ ահա այդ քնած միջոցին դրանց կաշուի տակից դուրս սլիտի գայ ուրիշ նորը, որից յետոյ առաջուայ մաշկը սլիտի տրաքուի, իսկ իրանք ողջ և առողջ սլիտի դուրս գան մէջից նոր ու լայն շապկով։

Եւ ճշմարիտ, Լուսիկը հէնց նոյն օրն և եթէ նկատեց, որ որդերը ցցած գլուխներով սկսեցին պտոյտ-պտոյտ գալ —շարժուիլ, որից յետոյ նրանց նեղ շապիկները տրաքտրաքուեցին ու վայր թափուեցան, այսպէսով նեղ մաշկից ազատուեցան՝ շապիկները փոխեցին—ինչպէս ասում են։

Մի ժամից յետոյ որդերը սկսեցին ուտել, սակայն ոչ այնքան ախորժակով, ինչպէս առաջ էին ուտում. օրից օր նրանք աւելի և աւելի սկսեցին ուտել, այնպէս որ բոլորն էլ շատակերներ դարձան։ Նրանց գոյնը դրանից յետոյ մոխրագոյնի փոխուեցաւ. իսկ մազեր այլ ևս չէին նշմարուում մաշկի վրայ։

Այնքան արագ մեծանում ու շուտ շուտ էին ուտում, որ Լուսիկը մնացել էր շուարած։ Շատ վազվզելուց ողորմելին միանգամայն յոգնում-բեզարում էր, կողովն էլ այնքան փոքր էր, որ տերևի համար մի երկու անգամ գնալու փոխարէն, ստիպուած էր լինում մի քանի անգամ գնալու։

Բայց այնուամենայնիւ նա այդ նեղութեան ամենայն սիրով տանում էր, որովհետև շատ էր ուզում տեսնել, թէ վերջը ի՞նչ սլիտի լինի։

## IV

Հինգ օրից յետոյ որդերը կրկին քնեցին. այս անգամ Լուսիկը բոլորովին չըվախեցաւ, այլ իսկոյն իմացաւ, որ դարձեալ պատրաստուում են փոխելու իրանց շապիկները,

հէնց այդպէս էլ եղաւ։ Դրանից յետոյ կրկին փոխուեցաւ նրանց գոյնը և դարձաւ մի տեսակ բաց-մոխրագոյն. իսկ մազերը խօմ բոլորովին անյայտացան։

Նրանք այսպէս շարունակ մեծանում և հետզհետէ շատակեր էին դառնում։ Եապկահան եղան կրկին երկու անգամ, դրանից յետոյ նրանք այնքան մեծացան, որ այլ ևս «փոքրիկները» չէր անուանում նրանց Լուսիկը, այլ շատակերները, որովհետև սաստիկ շատ էին ուտում։ Ձիշտն ասած, այժմ բոլորովին յոգնել էր նրանց պահելուց։ Մի անգամ էլ, որ սաստիկ յոգնել էր, նեղացած ասաց մօրը.

—Այս ինչ բան է, բերում ես բերում, չեն կշտանում. հէնց շարունակ ուտում են և ոչինչ էլ չեն շինում։

—Սպասիր, սիրելիս, պատասխանեց մայրը հանգիստ կերպով, սրանք շուտով կըդադարեն ուտելուց, և դու զարմանալի բաներ կըտեսնես։ Այդ ժամանակ որդերն այնքան մեծ էին, որ կարելի էր նրանց լաւ զննել ու դիտել։ Լուսիկը հետաքրքրութիւնով զննեց ու նկատեց հետևեալը. նրանց մարմինը բաղկացած էր տասն օղակներից. առաջևից՝ դէպի գլխի կողմը նրանք ունէին երեք-երեք զոյգ ոտներ, իսկ մարմնի մնացեալ մասի վրայ՝ հինգ զոյգ. վերջիններս աւելի հաստ էին և վերջանում էին այնպիսի յարմարութիւնով, որ հեշտութեամբ կարողանում էին բռնել տերևներ։ Նրանք նախավերջին օղակի մօտ՝ դէպի վեր՝ ունէին ողջիւրանման մի ցից։

Վերջապէս թրթուրները—այժմ մօր ասելով այսպէս էր անուանում նրանց—բոլորովին թափանցիկ էին դարձել, կարծես մեղրամոմից շինուած լինէին, և միևնոյն ժամանակ սաստիկ անհանգիստ էին երևում. գլուխները շարունակ դէս ու դէն էին պտտեցնում և աշխատում էին վեր բարձրանալ՝ թէկուզ ինչի վրայ էլ որ լինէր։

Մայրը պատուիրեց աղջկան, որ մի քանի ցախ բերի ու դնի դրանց մօտ։ Թրթուրները, որոնք մինչև այդ ժամանակ միմիայն ուտում էին և շուտ-շուտ մէկ ճիւղից միւս ճիւղն էին անցնում, այժմ այլ ևս ուտելուն ուշք չէին դարձնում, այլ կարծես, պատրաստւում էին փոքրիկ ճանապարհորդութիւն անելու։

Ա.Հա մէկը նրանցից բարձրացաւ ցախի վրայ, նրան հետեւից երկրորդը, երրորդը... բոլորեքեան բարձրանում են, նրանք մանեն գալիս ցախերի ոտերի վրայ և շարունակ մէկ ոտից միւսն են անցնում, իրանց համար յարմար տեղ են որոնում: Ա.Հա վերիններն արդէն կանգնել են և պատրաստւում են մի ինչ որ գործ սկսելու: Նրանք պատեցնում են գլուխները դէպի ամենայն կողմ և շրթունքները շարունակ շփելով ցախի այս կամ այն ոտին, կարծես համբուրելիս լինեն:

Լուսիկը լաւ դիտելով դրանց այդ շարժողութիւնը, նկատեց, որ դրանք ի զուր չեն պատեցնում իրանց գլուխները, այլ մի ինչ որ բարակ — աչքով հազիւ տեսանելի — թել են փաթաթում իրանց շուրջը, որ քանի գնում էր, այնքան աւելի նկատելի էր դառնում փաթաթածը:

— Ո՞րտեղից են հանում այդ թելերը:

Մայրը պատմեց, թէ այդ թելերը գոյանում են նրանց մարմնի ներսը, թէև դուրս են հանում բերանով: Երկար ժամանակ կանգնած՝ նայում էր Լուսիկը զարմացած. նա տեսնում էր, որ թրթուրները գլուխները դէս ու դէն են տանում, բայց թէ ինչո՞ւ համար, այդ մասին ոչինչ չէր իմանում:

Միւս օրը նա այլ ևս թրթուր չըտեսաւ, բոլորեքեան պատենաւորուած էին դեղին պատեաններով և փոքրիկ ձուաների տեսք էին ստացել: Հէնց այն ժամանակ՝ երբ Լուսիկը զմայլուած տնտղում էր հետաքրքրութիւնով, ներս մտաւ մայրը:

— Տես, մայրիկ, այլ ևս թրթուրներ չկան:

— Այո՛, նրանք պատենաւորուել են. տեսնում ես այդ ձուիկանման դեղիններըդ. ահա՛ դրանց մէջն են գտնւում թրթուրներդ. դրանք բոժոժներ են կոչւում, լաւ միտդ պահիր, չմոռանաս:

— Ինչո՞ւ համար են փակուել բոժոժների մէջ, հապա ո՞րտեղից պիտի դուրս գան, մայրիկ ջան, հ՞ը:

— Դրանք այդտեղ դեռ պիտի քնեն, և այդ քունը դրանց վերջին քունը կլինի, որից յետոյ դու այլ ևս թրթուրներ չես ունենալ, այլ կունենաս «հարսնեակները»:

—«Հարսնեակները», մ՛թթէ...

—Ա՛յ, հարսնեակները, ժպտալով պատասխանեց մայրը, միայն չըկարծես թէ այնպիսի հարսնեակները, որոնցով դու միշտ խաղում ես։

—Հապա ինչպիսի, ըրը պիտի տեսնեմ, մայրիկ ջան։

—Շուտով չես կարող տեսնել, որովհետև դեռ երկար կըքաշի. իսկ եթէ շտապում ես, շատ ես ցանկանում տեսնել, այն ժամանակ ես կըկտրեմ, մէջից կըպատռեմ մի բոժոժ և դու կըտեսնես, սակայն ոչ այժմ, որովհետև թըրթուրը դեռ չէ վերջացրել իր գործը։

Լուսիկի գործը բոլորովին վերջացել էր. նա թէև այլ ևս նեղութիւն չէր քաշում՝ տերև չէր բերում, չէր կերակրում, տակերը չէր մաքրում, միայն տխուր էր, որ բաժանուել էր իր սիրելիներից։

Առաջ մինչև անգամ զզւում էր՝ որ շատ տերև էր կրում, տակերը մաքրում, նեղութիւն քաշում, իսկ այժմ տխրում էր, որ այդ նեղութիւնն այլ ևս չէր քաշում՝ այնքան սովորել ու ընտելացել էր իր այդ սիրելիներին...

Սաստիկ հետաքրքրութիւնից դադար չունէր Լուսիկը. շուտ-շուտ գալիս՝ նտղում էր բոժոժներով զարդարած ցախերը, երկիւղով յետ էր դառնում՝ կասկածելով, թէ մի գուցէ նրանք՝ բոլորեքեան մէջը խեղդուած, ոչնչացած լինեն։

## V

Արդէն թրթռը հասել էր և մեր Լուսիկը անուշ էր անում։ Այսպիսով թթենիները երկու տեսակ ծառայութիւն էին մատուցանում. մէկ որ իրանց տերևներով կերակրում էին որդերին, մէկ էլ որ պտուղներով քաղցրացնում էին Լուսիկի բերանը։ Այդ տարին էլ—կարծես Լուսիկը խաթեր համար՝ որ իր գործին լաւ էր նայել—պտուղները սովորականից խոշոր էին և հիւթալի։

Մի քանի օրից յետոյ մայրը վերցրեց մի բոժոժ և կարեց. Լուսիկը տեսաւ բոժոժի մէջ բոլորովին ուրիշ բան. ոչ թրթռուր էր և ոչ թիթեռ, այլ շագանակագոյն մի փոքրիկ

մարմին էր, բաղկացած մի քանի օղականման ծալքերից, որոնք աւելի գլուխների նման էին, սակայն ոչ աչքեր ունէին և ոչ ոտներ։

Լուսիկը բոժոժից այդպիսի բան չէր տպաւում, նա մի շատ գեղեցիկ բան էր երևակայում, հէնց այդ պատճառով էլ շատ վատն եկաւ, երբ հակառակ տպաւածին՝ մեռած մարմին տեսաւ։ Փոքր ինչ լռութիւն պահպանելուց յետոյ, հարցրեց մօրը.

—Դրանք բոժոժում ինչ են անում։

—Քնած են, և այնքան կըքնեն, մինչև որ նորից կերպարանափոխուելու ժամանակը կըգայ. իսկ այդ բանը տեսնելու համար, դու դեռ էլի պիտի տպասես։

Բայց Լուսիկը բոլորովին յոգնել էր շատ տպասելուց. դրանից յետոյ մի քանի անգամ էլի եկաւ նայելու, բայց ոչինչ փոփոխութիւն չընկատեց. այնուհետև թողեց, մինչև անգամ նրանց մոռացութեան տուաւ։

Մի անգամ երբ նա խաղում էր պարտիզում, դուրս եկաւ մայրը ու կանչեց նրան ներս. հէնց որ բաց արեց շերամատան դուռը, իսկոյն աչքին ընկան մի քանի սպիտակ թիթեռներ, որոնք թափահարելով իրանց թևերը՝ պտոյտ-պտոյտ էին անում պատուհանում։

—Նրանք որտեղից դուրս եկան, զարմացած հարցրեց Լուսիկը։

—Մայրը նրան մօտեցնելով բոժոժներին՝ պատասխանեց.

—Հապա լաւ նայիր, ինքդ կիմանաս։

Լուսիկը տեսաւ միմիայն մի քանի ծակ ու դատարկ բոժոժներ, ուրիշ ոչինչ։

—Մի՞թէ բոժոժներից դուրս եկան այս գեղեցիկ թիթեռները, մայրիկ.—ինչպէս դուրս եկան։

—Բոժոժները ծակեցին ու դուրս եկան։

—Ինչո՞վ ծակեցին բոժոժները։

—Դրանք դուրս գալուց առաջ՝ իրանցից մի կծու հիւթ են արձակում, որն այրում, ծակում է բոժոժը. ապա իրանք առանց դժուարութեան՝ դուրս են պրծնում այդ նոր բացուած անցքից։

Լուսիկը թիթեռներով փոքր ինչ զուարճանալուց յետոյ՝

առանց մի խօսք անգամ ասելու, վազեց պարտէզը և մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ գոգնոցը լի տերևներով և թափեց թիթեռների առաջը։ Մայրն այդ տեսնելով՝ ծիծաղեց ու ասաց.

— Ի զուր անհանգստացար, սիրելիս, դրանք տերևներ չեն ուտիլ։

— Բաս ինչ պիտի ուտեն։

— Ոչինչ։

— Ի՞նչպէս թէ ոչինչ. մի՛թէ առանց ուտելու կարող են ապրել։

— Այո՛, կարող են, թէև ոչ երկար։ Շուտով ինքդ ամենը կըտեսնես, միայն՝ եթէ ուշադրութիւնով հետևես։

Միւս օրը մայրը ներս բերաւ մի թերթ թուղթ և դրեց պատուհանի վրայ. Լուսիկը իսկոյն ետևից վազելով՝ մօտեցաւ պատուհանին և տեսաւ թերթի վրայ մոխրագոյն անթիւ ձուաներ-սերմեր. այդ ձուաները բոլորովին նման էին այն ձուաներին, որոնցից դուրս էին եկել շերամի որդերը։

## VI

Թիթեռները երեք օր ձու գրին, ապա սատկոտեցին։ Լուսիկի շատ մեղքն եկաւ. հազար ու մի ափսոսանքով հաւաքեց ձուաներն ու բոժոժները, տարաւ մօր մօտ և հարցրեց.

— Այս ձուաներից էլ պիտի դուրս գան այնպիսի որդեր, մայրիկ։

— Այո՛, ինչպէս չէ. միայն հիմայ չէ, այլ առաջիկայ գարնանը։ Եթէ դրանց լաւ կըպահպանես ցուվ և ոչ խոնաւ տեղում, երբն ժամանակին կրկին կուներնաս թրթուրներ էլ, թիթեռներ էլ։

— Իսկ բոժոժն ինչ պիտի անենք, մայրիկ։

— Բոժոժն էլ ընծայիր ծանօթներիդ և մի առ մի պատմիր նրանց այն, ինչ որ տեսար ու իմացար։ Բայց եթէ շատ բոժոժ ունենալինք, ուրիշ կերպ կըվարուէինք. այն ժամանակ գործարան կաց կանէինք և կըպատրաստէինք

վիմ. մեսրոպ

**«ԱՂԲԻՒՐԻ» ԱԼԲՈՄ IV**

ԱՍԻԱԿԱՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

դրանցից ժապաւէնները, տեսակ-տեսակ թաւիշները և մետաքսէ թանկագին կտորները։

—Ինչ ես ասում, մայրիկ, բոժոժից ինչպէս կարելի է պատրաստել այդպիսի հիանալի բաներ։

—Ա.հա պատմեմ, լսիր՝ թէ ինչպէս են պատրաստում. Երբ որ թրթռուրները բոժոժը շինում, վերջացնում են, իրանք կուչ են գալիս նոյն իսկ բոժոժի մէջ և փոխարկւում «հարսնեակի» և այդպէս մնում։ Այդ ժամանակ մարդիկ հաւաքում՝ տաք գոլորշու կամ վառարանի մէջ են դնում։

—Օ՜, մայրիկ հարսնեակները խոմ կըխեղդուեն։

—Անկասկած, հէնց դրա համար էլ անում են։

—Այն ժամանակ այլ ևս թիթեռները էլ չեն դուրս գալ, տխրալի ձայնով նկատեց Լուսիկը։

—Այո՛, և ցանկալի էլ չէ, որ դուրս գան, որովհետև, ինչպէս ինքդ էլ տեսար—թիթեռները դուրս գալով ծակում են բոժոժը՝ կտրելով թելերը։ Միայն չեն խեղդում այն բոժոժը, որից ուզում են որ թիթեռ դուրս գայ՝ ձու ածելու համար։ Խեղդած բոժոժը՝ նախ քան թել քաշելը—թափում են եռացած ջրի մէջ։

—Այդ ինչու համար։

—Ա.հա թէ ինչու համար։ Ամեն մի բոժոժ կազմուած է մի երկար, շատ երկար—կէս վերստի կամ աւելի երկարութիւն ունեցող-ամբողջ թելից. թելի փաթաթուածքը միմեանց վրայ կարգ-կարգ դասուածի պէս է. այդ շերտանման կարգերը կպած են իրար հետ մածուցիկ հիւթով՝ սոսնձուած են։ Տաք ջրի մէջ այդ սոսինձը բացւում է, որից յետոյ կարելի է լինում յետ տալ այդ մետաքսէ երկար թելը, համարեա, ամբողջովին։

Եռացած ջրի մէջ թափելուն պէս՝ աւելներով տապալում են, որից բոժոժի արտաքին շերտի աւելորդ թելերը բաժանւում են։ Այդ աւելորդ թելերից յետոյ սկսւում է ամբողջի ծայրը, որն իսկոյն գտնում են, և երկու կամ մի քանի բոժոժից սկսած թելերի ծայրերը միացնելով՝ յետ են տալիս ճախարակների վրայ։ Յետ տուածը՝ այդ մետաքսէ

*Թելը սաստիկ բարակ լինելու համար՝ մի տակ են անում— ոլորում, մանում են։ Այդ ոլորած թելերից արդէն գործում են զանազան տեսակ մետաքսեղէնները։*

*—Ա՜խ, մայրիկ, ինչ զարմանալի որդեր են եղած իմ այդ «փոքրիկները». դու կատակ չէիր անում, երբ ասում էիր, թէ իմ ժապաւէնները գործուած են դրանց պատրաստած մետաքսէ թելերից, իսկ մետաքսէ թաշկինակս, բա ը մետաքսէ ձեռնոցները...*

*—Այո՛, հոգիս, թէ այդպիսի և թէ ուրիշ թանկագին ու օգտակար բաներ են պատրաստում մետաքսից։*

*Այժմ կարող ես դու էլ պատմել ը ընկերուհիներին, թէ ինչպէս ը արհեստանոցում քեզ համար մետաքս շինեցին ը փոքրիկ բանուորները— շերամի որդերը։*

ՏԻԿԻՆ Ս. ՈՒՄԻԿ.-ԴԱՒԹԵԱՆՑ

# ՊԱՐՏԱԻ

«Տեղն ու տեղն չահիլ-չիւան
Խոր քննեցին յաւիտեան.
Տղմի տակին մնացիր,
Օ՜ Բարդա՛, և չննջուեցիր։»
Թուրք. երգ.

## I

Արձեալ անունդ յիշել եմ ուզում,
Ո՛վ դու ալեզարդ, ծերունի Մըռա՛ւ,
Սիւնեաց լեռների հեզ գագաթ տրտում.
Իմ տակը հոգին՝ լի վշտով անբա՛ւ՝
Քո մօտ է թռչում, սլանում քո մօտ,
Դէպի քո ճերմակ կատարը ձիւնոտ։

Սակայն ո՛չ փայլուն քո բիւրեղները,
Ո՛չ քո կապուտակ, չինչ երկնակամար,
Ո՛չ բերրի լանջիդ առատ բերքերը,
Ո՛չ ծաղկափթիթ ցօղասլաց դալար,
Մեղմիկ զեփիւռը, երգիչք երկնային
Դարման չեն լինիլ իմ բեկուած սրտին։

## II

Դարեր են անցել այն փառքի օրից,
Երբ արծաթափայլ Թարթառի ափին
Հրճւում, ցնծում էր Պարտաւն այգելից
Եւ փառաբանում երջանիկ զոյգին—

Իր Վաչագանին, արքային հըզօր,
Զքնաղ Անահտին և նրանց ամոռ։
Երկար տարիներ վայելեց անյագ
Կեանքի քաղցրութիւն հինաւուրց Պարտաւ.
Բայց քո վիրաւոր, տկար լանջի տակ
Տղմակոխ արիր, անողոք Մահ,
Փառունակ կեանքից զրկեցիր նըրան,
Անհետ չնչեցիր երկրից յաւիտեան։

## III

Երբ ողջ քաղաքը Վարդավառի օր
Լի զգացմունքով փունջեր էր հիւսում,
Երբ ամենքըն այդ տօնին փառաւոր
Ջերմ մաղթանք էին Աստղիկին ձօնում,
Եւ ուրախ-զուարթ գոյն-գոյն ծաղկունքով
Նրա տաճարը զուգում, զարդարում,
Սև ամպը յանկարծ պատեց քո կատար,
Շուրջըդ մռայլեց, սևացաւ աշխարհ։
Բարձրացաւ խկոյն ցրտաշունչ քամին...
Մրրիկը կատաղած գազանի նըման
Գոռաց, տատանեց երկիրը համայն...
Աստուն, անաստուն — ամեն արարած
Դէպ՝ իրանց յարկը փախան սարսափած...

## IV

Գիշերն անցաւ.
Օրը բացուեցաւ։
Կարմիր արևը աշխարհիս վրայ
Կրկին սփռեց ճաճանչներ ոսկեայ։
Բայց տես Մռաւին... Յոգնած, դալկացած՝
Տնքում, ճռռում է խուլ հառաչանքով
Ձեան հսկայական կոյտով բեռնըւած.
Ծանր անքում է, կաշկանդուած ձիւնով,
Կիզիչ արևին կանչում օգնութեան,
Որ թեթևացնէ, ազատէ նրան։

## V

Այդ օրհասական չարագոյժ ժամին
Յանկարծ շառաչեց լեառը հիմնովին...
Իսկոյն բղխեցին նրա լանջերից
Անհամար ջրեր, ջրե՛ր յորդալից...
Մերկացաւ Մռաւն. հեղեղը պատեց
Նրա շրջակայք, թարթառն ողողեց...
Գետն՝ ահարկու վիշապի նման՝
Ուժգին մռնչաց, գոչեց բարձրաձայն.
Իրար զարնուելով պղտոր յորձանքները,
Կատաղած ալիքները, պատեցին դաշտերը.—
Ահա՛ կատաղի փրփուրի մէջին
Լողում, ծփում են սարսափած դէմքով
Կանայք հերարձակ ճչով դառնագին,
Անհամար մարդիկ լացով, ողբալով:
Հաստաբմատ ծառերը, պարսպի բեկորները
Իրար են զարնւում, փշրւում, խորտակւում.
Եւ դղրդում է որոտը լեռների,
Թնդում են դաշտերը, երկիրն է հեծում...
Ջնջուե՛ց Պարտաւը, ջնջուե՛ց լաւիտեան...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

# ԵՐԿՈՒ ՏՕՆԱՒՕԱՌ

(Ա. Ն Ն Ե Ն Ս Կ Ա Յ Ի Ց)

18.... թ. Ձրագալոյցի գիշերն էր։ Պետերբուրգին յաւուկ ոճստիկ ցուրտ քամի էր սկսուել։ Կատաղած քամին սառեցնում էր փողոցներում անց ու դարձ անողների փեշերը և նրանք սոխլուած պինդ փոթաթուում էին իրանց տաք մուշտակներում։ Այդ ժամանակ Նեւսկի պրոսպեկտի վրայով, երեկոյեան, մօտ ժամի 6-ին, արագ քայլերով գնում էր մի աղջիկ, որը կըլինէր մօտ տասն տարեկան։ Կարճ ու ու բարակ շորերը, հին ոտնամանները, պատառոտած գլխանոցը, ամենևին չէր պաշտպանում նրան ցրտից. դէմքը գունաթափուել ու շրթունքները կապտել էին. նա երևում էր, որ պէտք է մի շատ չքաւոր ընտանիքի զաւակ լինէր։ Քամու հարուածելիս նա ամեն անգամ կանգնում. և ապա արագ շարունակում էր գնալ։ Ա ն ի չ կ ի ն կոչուած կամուրջի վրայ նրա եռևից հասաւ մի ուրիշ աղջիկ, որի մայրը առաջինի մօրը լաւ ծանօթ էր, իսկ սրանք իրար լաւ ընկերուհիներ էին։

—Հեղինէ, Հեղինէ, ո՞ւր ես գնում, կանչեց նոր եկողը։

Հեղինէն վախեցած ետ նայեց, բայց նա սկզբից չըճանչեց ընկերուհուն։

—Ա՜խ, Մարիամ, այդ դո՛ւ ես, ասաց նա ուրախ ձայնով։

—Ո՞ւր ես գնում, Հեղինէ, ես հազիւ կարողացայ քեզ հասնել։

—Մայրիկս ինձ ուղարկեց մի տիկնոջ մօտ մի մանէթ խնդրելու, շատ հարկաւոր է, գիտես, Մարիամ, եղբայրս խիստ հիւանդ է։

—Մխթէ, նա հիւանդ է։

—Այ՛, շատ հիւանդ է։ Երէկ մայրիկս նրան բժշկի մօտ տարաւ. բժիշկը մի դեղ էր գրել և ասել էր որ ամեն երկու ժամից յետոյ մի-մի դգալ տանք այդ դեղից, կարելի է առողջանայ։ Մայրիկս ծախեց իր էթէ շրջազգեստը մի մանէթով և գնեց այն դեղը։ Մենք ամբողջ դիշերը տալիս էինք այդ դեղից, ինչպէս բժիշկը պատուիրել էր, այս առաւօտ նա քիչ լաւ էր, մինչև անգամ աչքերը բաց արեց և արտասանեց. «Մայրիկս»։ Իսկ այժմ, որ այդ դեղից էլ չունենք, երեկոյեան դէմ էլի վատացաւ. նա շատ անհանգիստ է և շարունակ հառաչում է։ Հեղինէն յոգնած լինելով, հազիւ կարողանում էր շունչ քաշել և պատմել իր ընկերուհուն իր սիրտը ալեկոծող վիշտը։

—Խեղճ, ողորմելի Պետրոս, բացագանչեց Մարիամը տրխուր ձայնով, այնպիսի խելօք և սիրուն տղայ է, մխթէ նա կըմեռնի։

Հեղինէն ոչինչ չըպատասխանեց, այլ սկսեց վազել, կարծես թէ նրա եղբօր կեանքը իր շուտ գնալուց լինէր կախուած։ Բայց Մարիամն էլ նրանից չըբաժանուեց և մի քանի րոպէից յետոյ նրանք կանգնեցին երկյարկանի տան դրան մօտ։

—Ահա՛ նա այստեղ է կենում, ասեց Հեղինէն հազիւ շունչ քաշելով յոգնածութիւնից։ Մայրս պատուիրեց, որ այս սանդուղքով չըբարձրանամ, նրանց ծառան շատ բարկացոտ է, ես կըմտնեմ բակի դռնից։

—Իսկ ես այստեղ դռան մօտ կըսպասեմ քեզ, ասաց Մարիամը։

Հեղինէն մտաւ բակի դռնից, բարձրացաւ հազիւ լուսաւորուած սանդուղքով և մտաւ երրորդ յարկի մեծ խոհանոցը։

Նրանց խոհարարուհին սամաններ էր լուանում, մանկահասակ աղախինը սպիտակեղէններ էր յարդարում, կռուելով սպասաւորի հետ, որը քրթմնջելով մաքրում էր պարոնի կօշիկները։ Հեղինէին իսկոյն չընկատեցին, նա մօտեցաւ վառարանին և երկչոտ ձայնով մի քանի անգամ կրկնեց. «Լսեցէ՛ք, դէ՛հ, լսեցէ՛ք ինձ»։

Ամենից առաջ նրան տեսաւ սպասաւորը և բարկացած ձայնով ասած. «Այս ո՞վ է», և առանց սպասելու պատասխանին՝ դարձաւ խոհարարուհուն. «Դուք, Ֆեօդոսիա Իւանովնա, որ երբէք դռները չէք կողպում, իսկ արծաթեղէնները միշտ սեղանի վրայ են, ահա այսպիսի մուրացկանը կը բարձրանայ և մի որևէ բան կանյայտացնէ»:

Խոհարարուհին իմացաւ այս նկատողութեան ճշտութիւնը և բարկացած հայեացքով նայելով Հեղինէի վրայ՝ պատրաստւում էր նրան դուրս անել խոհանոցից: Հեղինէի գունաթափ այտերը կարմրեցին բարկութիւնից, իսկ աչքերը փայլում էին:

—Ես բոլորովին մուրացկան չեմ, ես ձեզանից ոչինչ չեմ գողանալ, ասաց նա վիրաւորուած ձայնով, ես եկայ ձեր տիկնոջ մօտ, տեղեկացրէք նրան իմ մասին, ես կար անող Կատարինէ Օսիպովնայի աղջիկն եմ, տիկինն ինձ ճանաչում է:

—Բայց ինչ գործ ունես տիկնոջ հետ, ասաց խոհարարուհին իր ձայնը քիչ մեղմացնելով:

—Ես ուզում եմ նրան տեսնել, հարկաւոր է:

—Տիկինը ժամանակ չունի, նա գնալու է եկեղեցի և այժմ հագնւում է, և վերջացնելով շրջազգեստի յարդարելը՝ տարաւ տիկնոջ մօտ:

—Դուք միայն իմացրէք, մի րոպէ բաւական է որ ես նրան տեսնեմ, Հեղինէն աղաչելով ձայն էր տալիս խոհարարուհու ետևից:

Քառորդ ժամից յետոյ Հեղինէին կանչեցին տիկնոջ սենեակը: Տիկինը բաւականին չափահաս, բարձրահասակ և բարձր կին էր. կանգնած էր հայելու առաջ շքեղ հագնուած:

—Ի՞նչ ես ուզում, աղջիկ, ասաց նա, ոչ այնքան քաղցր ձայնով, ասա շուտով, ես ժամանակ չունեմ, գնալու եմ:

—Մայրիկս ինձ ուղարկեց ձեզ մօտ փող խնդրելու, ասաց նա երկիւղով:

—Փո՛ղ, այդ ինչ կընշանակէ: Ես կարծեմ, իր աշխատանքի համար բոլորը վճարել եմ, թէև վերջին շապիկները լաւ չէր կարել:

—Մայրիկս կարծեց թէ... իմ փոքրիկ եղբայրս շատ

հիւանդ է... մենք փող չունենք դեղի համար... մայրիկս ինձ պատուիրեց, որ ես ձեզանից փող խնդրեմ, իսկ դրա փոխարէն նա ձեզ համար կար կըկարէ։

—Ուրեմն քո մայրը սկսելը է մուրալ և քեզ էլ նո՞յնն է սովորեցնում, շատ գեղեցիկ,—այս ասելուց յետոյ տիկինը պատրաստւում էր դուրս գնալու։

«Եթէ նա ոչինչ չըտայ, Պետրոսը կըմեռնի», մտածեց Հեղինէն և յուսահատութիւնը նրան համարձակութիւն տուեց կրկին խօսելու։

—Ի սէր Աստծոյ, տիկին, օգնեցէք մեզ, Պետրոսը հիւանդ է, նա կըմեռնի։

—Ո՜հ, դու ինչ անտանելի ես, ասելով գցեց նրա առաջը մի 15 կոպէկանոց և աւելացրեց,—վեր ա՛ռ և կորի՛ր այստեղից, իսկ ինքը շտապեց որ սենեակից դուրս գայ։

Հեղինէի աչքերից արտասուքի կաթիլները թափուեցան։ «Ծանո՛ւհի՛նդ կոպէկ, սա շատ քիչ է, տիկին, դեղը մէկ ռուբլի արժէ»։ Նա ուզում էր տիկնոջ ետևից գնալ և էլի աղաչել, բայց աղախինը նրան արգելեց։

—Ա՛յ աղջիկ, գժո՞ւել ես՝ ինչ է, ասաց նա բարկացած ձայնով,—մի՛թէ կարելի է տիկնոջը այդքան նեղացել. ինչ որ տուեց, դրանով էլ շնորհակալ եղիր։

—Բայց մենք ինչո՞վ առնենք դեղ եղբօրս համար, ասաց Հեղինէն սարսափած։

—Լաւ, առանց դեղի էլ կանցնի. գնա՛, շուտ գնա՛, ես ժամանակ չունեմ քեզ հետ խօսելու։

Նա կամաց հրեց և ինքն էլ հետևելով գնացին խոհանոց։ Հեղինէն էլ չէր լալիս, էլ ոչինչ չէր խնդրում։ Նա մեքենայաբար անցաւ մեծ խոհանոցը և առանց մի րոպէ անգամ կանգ առնելու՝ դուրս եկաւ այնտեղից։ Անցկենալիս նա լսեց թէ ինչպէս աղախինը պատմեց իր մասին և սպասաւորը նկատեց ասելով՝ այդ աղքատները շարունակ կամ եղբայր են ունենում հիւանդ, կամ հայր, բայց միշտ խաբում են։ Հեղինէն չըվիրաւորուեց այս կոպիտ նկատողութիւնից. նա միայն զգում էր, որ ամեն ինչ վերջացած է, որ Պետրոսին ազատելու համար էլ ոչ մի տեղից յոյս չըկայ։ Բարի

Մարիամը դեռ էլի սպասում էր իր ընկերուհուն: Հեղինէն մի քանի կցկտուր խօսքերով պատմեց իր անյաջողութեան մասին և բարկացած դէն շպրտեց ստացած տասնուհինգ կոպէկը:

—Ցաւում եմ, արտասանեց Մարիամը, վերցրեց գետնին ցցած փողը, դրեց նրա գրպանը և ասաց Հեղինէին, —դու յոյսդ մի կտրիր, Հեղինէ, գիտես, ես այժմ ուր եմ գնում. գնում եմ մի հարուստ ընտանիք կայ՝ այնտեղ. նրանց լուացքը միշտ մայրս է անում. այսօր այնտեղ տօնածառ են ունենալու և նրանց աղախինը խոստացաւ ինձ մի տեղից տօնածառը ցոյց տալ: Ես անցեալ տարի էլ գնացի. նրանք շատ բարի օրիորդ ունէին. այն ժամանակ նա ինձ ընծաներ տուեց, կարելի է հիմայ էլ տայ. իսկ մենք կասենք, որ հարկաւոր չեն այդ ընծաները, տուէք մեզ փող, որ հիւանդ Պետրոսի համար դեղ առնենք: Դու համաձա՞յն ես, կրգա՞ս ինձ հետ:

«Լաւ, գնանք». համաձայնուեց Հեղինէն և լուսոյ թոյլ ճառագայթը լուսաւորեց նրա աչքերը:

Մի քանի րոպէից յետոյ երկու աղջիկն էլ հասան իրանց ծանօթ խոհարարուհու սենեակը:

—Դուք ուզո՞ւմ էք տօնածառին նայել, բարի ժպիտով ասաց նա, յայտնի բան է, որ կուզենաք, երեխայական բան է, բայց չըգիտեմ թէ ո՞րտեղ կանգնեցնեմ ձեզ, միայն այնպէս պիտի անեմ որ չընկատեն ձեզ, թէ չէ սարօնները կըբարկանան: Գնանք, տեսնենք:

Մի քանի մութ սենեակներ անց կացնելով խոհարարուհին՝ նրանց կանգնեցրեց ապակեայ դռան ետև, այնպէս որ նրանց ու դահլիճի մէջ տեղը մի մութ սենեակ էր մնում:

—Այստեղ կանգնեցէք, հանդարտ և լուռ նայեցէք այնտեղ. երբ որ կբվառեն տօնածառը, դահլիճի դռնից կերևայ ամեն ինչ:—Աղջիկները մութ սենեակի դռան ետև կանգնած՝ հինգ րոպէ սպասեցին: Մարիամը անհամբեր սպասում էր հանդիսի սկսելուն. իսկ Հեղինէն, մտածելով թէ ինչպէս մայրը անհամբեր սպասելիս կըլինի իրան, զղջաց որ համաձայնուել էր այդտեղ գալ իր ընկերուհու հետ: Բայց ահա՛ նրանց հանդէպ դահլիճի դուռը բացուեցաւ և միւս

սենեակից խօսակցութեան ձայները լսուեցան. մտաւ և մէկ ուրիշ պարոն, վառած մոմը մօտեցրեց տօնածառին, որ դրուած էր գետնին, իսկ ճիւղերը հասնում էին առաստաղին և յանկարծ ահագին ծառի կանաչ տերևների մէջից կրակները երևացին. վառուեցան հարիւրաւոր մոմեր և զանազան գոյնի փոքրիկ լապտերները, որոնք կախ էին սրած տօնածառի վրայ: Իսկոյն ներս թափուեցան երեխայքը՝ գեղեցիկ հագնուած տղաներ ու աղջիկներ. իսկ նրանց հետևում էին ուրախ ուրախ խօսակցելով մի քանի տիկիններ և պարոններ:

—Օ՜հ, ինչ հիանալի է, կամաց արտասանեց Մարիամը: Նա բոլորովին հիացած էր այս գեղեցիկ պատկերով. նրա աչքերը կարմրել էին և ուրախութիւնից փայլող աչքերով հետևում էր երբեմն ուրախ թռչկոտող երեխաներին, երբեմն գեղեցիկ հագնուած տիկիններին և զննում նրանց հագուստները, շարժուածքները: Իսկ Հեղինէն, ընդհակառակն, առաջուայ պէս գունաթափ դէմքով նայում էր հանդիսականներին. նրա աչքերն աւելի բարկութիւն և անհանգստութիւն էին արտայայտում քան թէ ուրախութիւն: Երբ երեխաները բաւականին պարեցին և զուարճացան տօնածառի շուրջը խաղալով, սկսուեց պարգևաբաշխութիւնը: Բաժանում էին զանազան խաղալիկներ, փոքրիկ ձիաներ, կառքեր, թըմբուկներ, փառակազմ գրքոյկներ և այլն: Ինչպէս երևում էր, բոլորն էլ շատ գոհ էին լինում իրանց ստացած ընծաներով: Նրանց խնդութեան աղաղակները խլացնում էին լսողի ականջները:

«Այդ ընծաներից միայն մէկը բաւական էր Պետրոսի համար գեղ գնելու», մտածեց Հեղինէն, և այնպէս կսկծայ նրա սիրտը, որ շուռ եկաւ և էլ ուրիշի ուրախութեանը չէր ուզում նայել:

Մարիամը չէր տանջւում Հեղինէի նման՝ տխուր մտածմունքներով, նա անդադար նայում էր թէ ո՞վ ինչ ընծայ էր ստանում և այնքան մոռացել էր իրան, որ գուռը կիսով չափ բաց էր արել և այնպէս էր նայում: Տան տիրոջ փոքրիկ աղջիկ Աննան, որ մօտ տասն տարեկան էր, նկատեց նրան, իսկոյն գնաց, վեր առաւ սեղանից մի քանի կօնֆետ,

ուրախ ուրախ մօտ վազեց և տուեց Մարիամին, սա էլ չը մոռանալով իր մտադրութիւնն ասաց. «Շնորհակալ եմ, օրիորդ, բայց ինձ կօնֆետ չի հարկաւոր, եղէք բարի, աւելի լաւ է շնորհէք ինձ...

—Աննա՛, Աննա՛, նայիր, իմ տիկինը ճնչէ սիրուն կօշիկներ ու գուլպաներ ունի, լսուեց Աննայի ընկերուհու ձայնը և նա էլ չիմանալով խեղճ Մարիամի խնդրածը՝ վազեց նրա մօտ:

—Մարիա՛մ, ես կըգնամ տուն, շատ ուշացայ, ասաց վըշտացած Հեղինէն:

Մարիամը թէև չէը ուզում այնտեղից հեռանալ, բայց իր ընկերուհուն չուզեց միայնակ թողնել, և ինքն էլ գնաց նրա հետ:

Ծառաները զբաղուած էին իրանց գործերով, այս պատճառով ոչ ոք չընկատեց այս երկու աղջկայ դուրս գնալը: Նրանք լուռ անցան մի քանի փողոցներ. երկուսի միտքն էլ զբաղուած էր տարբեր մտածմունքներով:—Ի՜նչպէս ուրախ և լաւ էր այնտեղ, ընդհատեց Մարիամը լռութիւնը:

—Լսի՛ր, Հեղինէ, շարունակեց նա, ուղիղ է որ ասում են թէ քո հայրը կարող էր հարուստ լինել:

—Այո՛, եթէ հօրս աչքերը չըցաւէին, նա էլի կըշարունակէր նկարչութիւնը, երևելի նկարիչ կըդառնար և մենք այսպէս խեղճ չէինք լինիլ, ասաց Հեղինէն տխուր ձայնով:

—Այն էլ ուղիղ է որ քո հայրը Սարատովում մի հարուստ հօրեղբայր ունի:

—Այդ չըգիտեմ, հայրս ասում է, որ նա երևի վաղուց մեռած կըլինի. դեռ նա պապիս հետ խռով է եղել, իսկ երբ իմացել է, որ հայրս նկարիչ դառաւ, շատ է նեղացել և երբ հօրս աչքերը ցաւեցին, այնպէս որ այլ ևս չէր կարողանում աշխատել, մայրս մի շատ սրտաշարժ նամակ գրեց և նրանից օգնութիւն խնդրեց, իսկ նա չըպատասխանեց:

—Ո՜հ, ո՛րքան չար է եղել, նկատեց Մարիամը:

—Բոլոր հարուստները անխիղճ են, հաստատեց Հեղինէն: Նրանք լռեցին:

Ճանապարհի մեծ մասն արդէն անցել էին: Գիշերուայ

ցուրտ քամին փչելով բարձրացնում էր Հեղինէի բարակ հագուստի փեշերը և նա ցրտից դողալով կալչում էր իր ընկերուհուն: Վերջապէս հասան այն տեղը, որտեղ պէտք է բաժանուէին և իրար բարի գիշեր մաղթելով՝ աւելի արագացրին իրանց քայլերը:

Մի քանի րոպէից յետոյ Հեղինէն արդէն գտնւում էր իրանց փայտաշէն տնակի շէմքին. նա կամաց բաց արաւ դուռը և ներս մտաւ, որտեղ ներկայացաւ իրան մի շատ տխուր տեսարան. հազիւ լուսաւորուած խրճիթը, որի մի կողմից լսւում էր հիւանդ երեխայի հառաչանքը, միւս կողմը հայրը խորասուզուած մտածմունքի մէջ՝ երեսը ծածկել էր ձեռքերով. իսկ մայրը դռան շէմքում հանդիպելով նրան՝ անհամբերութեամբ հարցրեց.

—«Դէհ, ի՞նչ արիր. ի՞նչու այդքան ուշացար»:

—Ո՛չինչ, պատասխանեց Հեղինէն, շնչասպառ եղած յոգնածութիւնից ու ցրտից և կարճառօտ պատմեց բոլոր անցքը: Մայրը, առանց մի խօսք արտասանելու, աչքերից աղի արտասուք թափելով, մօտեցաւ հիւանդին: Այդ ժամանակ հայրը սթափուելով՝ բարձրացրեց գլուխը:

—Ես գիտէի, որ այդպէս պէտք է լինէր, բղաւեց նա, իր կոշտ ձեռքը խփելով սեղանին,—էլ ի՞նչ հարկաւոր էր աղջկան մուրալու ուղարկել. Պետրոսը կըմեռնի, բայց աւելի լաւ է նրա համար մահը, քան այս սարսափելի կեանքը, որին մենք ենթարկուած ենք:

—Ոչ, հայրիկ, ո՛չ, նա չըպէտք է մեռնի, ընդհատեց Հեղինէն և մօտենալով մահճին՝ սկսեց ցածր ձայնով հեկեկալ:

Մահճի վրայ զառանցանքի մէջ ընկած էր վեց տարեկան սիրուն տղան. նրա դէմքը և ձեռները, որոնց նա տնդաղար այս ու այն կողմն էր գցում, շատ նիհարել էին. դէմքը կարմրել էր տաքութիւնից, մեծ ու թխպած աչքերը լայն բաց էր արել. բայց ինչպէս երևում էր, շրջապատող առարկաներն չէր տեսնում:

Այդ գիշեր ոչ ոք չըքնեց: Հայրն առանց շարժուելու նստած էր աթոռի վրայ տխուր մտածմունքների մէջ ընկած.

մայրն ու աղջիկը չըհեռացան հիւանդի մահճից, թէև բոլորովին աւելորդ էր նրանց հսկողութիւնը. խեղճ երեխան լուսաբացին բոլորովին հանգստացաւ: Նա աչքերը փակելով դադարեց հառաչելուց. միայն երկար ընդհատող շնչառութիւնը ցոյց էր տալիս, որ նա դեռ կենդանի է:

Հեղինէն նստած յատակի վրայ՝ գլուխը հիւանդի մահճին յենած՝ քիչ նիրհեց. բայց հօր ոտի ձայնն ու մօր հեկեկանքը շուտով արթնացրին նրան:

—Ի՞նչ է, ինչ, հարցրեց նա վախեցած տեղից վեր թռչելով:

Նրան ոչ ոք պատասխան չըտուեց, բայց մի հայեացք ձգելով անկողնի վրայ, ամեն ինչ պարզուեց. մայրը համբուրում էր և իր առատ արտասուքներով թրջում հանգուցեալի դունատթափ-կապտագոյն ձեռները:

Հասկանալի է թէ որքան տխուր պէտք է լինէին ծննդեան տօնին Հեղինէն ու իր ծնողները. նրանք մինչև անգամ մոռացել էին, որ այդ օրը մեծ տօն է և որ իրանց շուրջը բոլոր մարդիկ ուրախանում են ու զուարճանում: Թէև բոլորովին լուսացել էր, բայց նրանց տնակում, որի պատուհաններին կիսով չափ հասել էր ձիւնը, այնքան մութ էր, որ հազիւ կարելի էր իրար ճանաչել: Սենեակի պատերի վրայ խոնաւութիւնից ահագին սև բծեր էին գոյացել. այդ ողորմելի բնակարանի բոլոր զարդը կազմում էին՝ մէկ մահճակալ, երկու աթոռ և մէկ սեղան. այս սեղանի վրայ դրեց մայրը իր փոքրիկ երեխայի մարմինը:

Հեղինէն սենեակի մի անկիւնում նստած յատակին, երեսը ծածկել էր իր մեծ մոխրագոյն թաշկինակով և գլուխը դրել էր վառարանի վրայ, որի մէջ կրակը բոլորովին մարել էր: Նա այնքան չէր լաց լինում, ինչպէս մայրը, բայց նրա երեսը մեռելի գոյն էր ստացել և աչքերը փայլում էին: Դուռը կամաց բացուեցաւ և ներս մտաւ Մարիամը: Նա չընկատեց թէ ինչ էր դրած սեղանի վրայ և քաղաքավարի կերպով ողջունելով Կատարինէին, ցածր ձայնով սկսեց խօսել, զգուշանալով որ հիւանդին անհանգիստ չանէ:

—Մայրիկն ինձ ուղարկեց ձեզ մօտ. երէկ նա ուշ վե-

բաղարձաւ գործից և մենք ժամանակ չունեցանք այստեղ գալու. իսկ Հեղինէն ասում էր, որ ձեզ շատ հարկաւոր է փող և ահա մայրիկս ուղարկում է ձեզ երեք ռուբլի:

—Շնորհակալ եմ քեզանից, Մարիամ, արտասուք թափելով և աղջկան համբուրելով ասաց Կատարինէն,—այս փողով գոնէ դագաղ կառնենք Պետրոսի համար:

—Ի՞նչպէս, մ՛թէ... Մարիամի հայեացքը ընկաւ սեղանի վերայ և նա իր խօսքը չաւարտած՝ սկսեց դառնապէս լաց լինել:

Այդ ժամանակ Հեղինէն մօտեցաւ իր ընկերուհուն և տխուր ձայնով ասաց. «Յիշո՞ւմ ես երէկուայ տօնածառը, Մարիամ, ախ, եթէ նրանք այնպէս զբաղուած չլինէին իրանց տօնածառով և մեզ փող տային, Պետրոսը չէր մեռնի»:

—Բաւական է, Հեղինէ, վախեցած ձայնով ասաց Կատարինէն, ինչպէս կարելի է այդպէս խօսել:

—Ես միշտ այսպէս կըխօսեմ և միշտ այսպէս կըմտածեմ, ասաց Հեղինէն վճռական եղանակով:

Մարիամն այդ բոլորին սարսափ էր զգում և այդտեղ մնալն անհնար էր թւում: Բարի աղջիկը ամբողջ սրտով ուզում էր մխիթարել իրանց անբախտ հարևաններին, բայց նա զգում էր որ իր ուժից բարձր էր, անտանելի էր վկայ լինել այս ամենացաւալի տեսարանին:

«Մնաք բարեաւ, ես գնում եմ տուն», ասաց նա երկչոտ ձայնով և Հեղինէին համբուրելով՝ սպառասում էր գնալու. բայց նա չանկարծ մի բան մտաբերելով՝ կանգ առաւ:

—Ներեցէք, պ. Գրիգոր, ես մոռացայ որ ձեզ վերաբերեալ նամակ էի բերել, ասաց Մարիամը դիմելով Հեղինէի հօրը,—նամակաբերը հանդիպեց ձեր փողոցում և տեսնելով որ ես ձեզ մօտ եմ գալիս, տուեց այս նամակը որ ձեզ հասցնեմ:

—Ինձ վրայ նամակ, բացագանչեց Գրիգորը, զարմանք չէ:

Եւ պատռելով ծրարը՝ մօտեցաւ պատուհանին, որ կարդայ. նա երկար նայում էր, կարծես չէր հասկանում նամակի բովանդակութիւնը և կամ չէր կարողանում հաւատալ

իր աչքերին։ Իրանց աղքատիկ բնակարանում մի նամակ ստացուելը ոչ պակաս զարմանք պատճառեց և Կատարինէին, որ հետաքրքրութիւնից մօտեցաւ ամուսնուն և երկուսը միասին սկսեցին կարդալ։

—Ձշմարիտ չըգիտեմ, հաւատամ այս բանին թէ ոչ, արդեօք երազ չէր. ա՛յ, կնիկ, դու էլ կարդացիր։

—Ա՛յո՛, կարդացի, դողդոջուն ձայնով ասաց Կատարինէն,—վերջապէս Աստուած գթաց մեզ վրայ, Հեղինէ, լսիր հո՛գիս, պապիդ եղբայրը վախճանուել է և մենք ենք նրա միակ ժառանգները, էլ աղքատ չենք լինելու։

—Եւ մի՛թէ մխիթարիչն չէ, մայրիկ, քանի որ Պետրոսը չըկայ։

—Ա՛յո՛, ուղիղ է, չըկայ այլ ևս իմ սիրելի Պետրոսս, շատ ուշ հասաւ մեզ այս երջանկութիւնը. նա չէ կարող ազատել, նա չէ կարող յարութիւն տալ իմ որդուս։ Եւ նա նորից սկսել հեկեկալ ընկնելով որդու դիակի վրայ։

—Բաւական է, քանի՛ լաս, ասաց Գրիգորը կնոջը մօտենալով, անցածը չես կարող յետ դարձնել և ոչ մեռածին կենդանացնել. մենք փառք Աստուծոյ, աղջիկ էլ ունինք, այսուհետև հանգստութիւն կըվայելենք։ Այս նամակը ձեռքիս ես կերթամ և գուցէ ինձ յաջողուի այնքան փող ճարել, որ մեզ համար ուտելիք և սրա համար (նա ցոյց տուեց մեռածի վրայ) հարկաւոր բաներն առնեմ։

Երեկոյեան խրճթումը ամեն ինչ կարգին էր. վառարանում կրակ էր վառուում, երեխայի մարմինը դրուած էր բաւականին զարգարուած դագաղի մէջ և մայրը քանի նայում էր նրան՝ առաւ արտասուք էր թափում. բայց նրա դէմքի արտայայտութիւնն այժմ աւելի բարի էր և կենդանացած քան թէ առաւօտեան. նա ճախ ընթրիքի պատրաստութիւն էր տեսնում։ Գրիգորը նոյնպէս տխուր էր և լուռ, բայց ոչ առաջուայ պէս յուսահատուած։ Միայն Հեղինէն էր, որի վրայ ոչ մի փոփոխութիւն չէր նշմարուում։ Նա էլի այնպէս գունատ էր, ինչպէս առաւօտեան, իսկ աչքերը արտայայտում էին սրտի վշտերը։

—Հեղինէ, արի դու էլ ընթրիր, կանչեց նրան մայրը։

Աղջիկը դէս ու դէն նայելով և գագաղի մօտ վառած մոմեր նկատելով, ասաց ցածր ձայնով. «Ո՛րքան լոյս է սենեակի մէջ, մեղրամոմեր էլ են վառուում, ինչպէս երէկուայ տօնածառի վրայ»։

## II

Այն փոփոխութիւնը, որ կատարուեցաւ Պետրոսի մահից յետոյ՝ թէ Հեղինէի և թէ նրա ծնողների համար՝ աւելի նշանաւոր էր, քան թէ նրանք էին նախազգում։ Ընդհանց ազգականն իրանից յետոյ թողել էր մեծ կարողութիւն։ Գրիգորը հանգուցեալի միակ ժառանգը լինելով, միանգամից հարստութեան տէր դարձաւ։

Կեանքի այդ նոր դրութիւնն պահանջում էր և նոր աշխատանք ու գործ, որոնց մասին այս ընտանիքը, ապրելով միշտ աղքատութեան մէջ, բոլորովին հասկացողութիւն չունէր։

Մի քանի ամսից յետոյ Գրիգորը սկսեց ամբողջ օրը զանազան թղթերով և հաշիւներով զբաղուել, փաստաբաններ և ուրիշ գործունեայ մարդկանց հետ տեսակցել։ Իսկ տնային գործերի փոփոխութեան հոգսը քաշում էր միայն Կատարինէն. նա իր ամուսնուց ստացել էր հազար ռուբլի, որով տուն պէտք է վարձէր, տան կահ-կարասիք և իրանց համար շորեր գնէր. նա շուարուել էր, չէր իմանում ինչպէս սկսէ իր գործը։

—Նայիր, Հեղինէ, ասում էր նա, դեռ իրանց աղքատիկ խրճթումը նստած, թերթելով թղթադրամները, տես, ինչպէս հարուստ ենք, ասա՛, ինչ է հարկաւոր։

—Ամենից առաջ, ես կարծում եմ, մայրիկ, մենք պէտք է առնենք տաք վերարկուներ և գլխարկներ, և յետոյ գընանք տներ որոնելու։ Ես մէկ տան տեղ գիտեմ, ասում են որ նրա տանուտէրը տեղափոխւում է Պետերբուրգից, տունը վարձու է տալիս, իսկ տան կահ-կարասիքը ծախում է չորս հարիւր ռուբլով. այդ տունը մեզ համար շատ լաւ կլինի, բոլորը միանգամից կունենանք։ Իսկ յետոյ, շարունակեց նա,

մենք էլի պէտք է առնենք երկու ձեռք շոր Մարիամի և նրա մօր համար և երեք հարիւր ռուբլի էլ փող պիտի բաշխենք նրանց, որովհետև նրա մայրը միշտ ասում էր. «Եթէ ես ունենայի երեք հարիւր ռուբլի, էլ օրավարձով չէի աշխատիլ ու բաց կանէի լուացարարի արհեստանոց:

— Ի հարկէ, մենք պարտաւոր ենք նրանց օգնելու, առայժմ գնանք շորեր առնելու:

Նրանք արդէն տեղափոխուել էին իրանց աղքատիկ խրճլթիից երեք սենեակից բաղկացած մի գեղեցիկ մաքուր բնակարան, որն առաջին օրից իրանց դրախտի պէս էր երևացել. իսկ հիմա էլ չէին հաւանում, միշտ գանգատւում էին թէ նեղուածք է և անյարմար: Գրիգորը նոյնպէս ուզում անպատճառ քաղաքի որևէ կենդրոնին մօտիկ տուն վարձել: Մի ամսից յետոյ նրանք տեղափոխուեցան քաղաքի յայտնի փողոցի վրայ վեց սենեակից բաղկացած մի բնակարան. տան համար էլի ինչ կահ-կարասիք որ հարկաւոր էր՝ առան. իրանց համար էլ մի քանի ձեռք շոր առան և ապրում էին ծառաներով և աղախիններով: Մարիամի և նրա մօր համար մի-մի ձեռք շոր առան:

Ծակատագրի այս անսպասելի բարեփոխումից յետոյ Հեղինէն կարծես շուարուել էր: Երբ նա խանութ էր մտնում, վաճառականները իրանց յատուկ խոնարհութեամբ նրա առաջն էին բերում ամենալաւ կերպասներ, ժապաւէններ ու կրուժովաններ, երբեմն էլ զանազան խաղալիկներ, պատկերներ, փափուկ գահաւորակներ և բազկաթոռներ, սեղաններ և այլն: Նրա հայեացքը մէկ առարկայից միւսի վրայ էր անցնում, չէր իմանում որն առնէր, կամ որքն հաւանութիւն տար:

Հանգամանքներից ստիպուած, Գրիգորը շատ մարդկանց հետ ծանօթացաւ. Հեղինէն էլ շատ ընկերուհիներ ճարեց, որոնք բոլորն էլ երևելի և հարուստ ընտանիքի զաւակներ էին. նրանք շուտով այնքան մտերմացան, որ բացատրում էին Հեղինէին իր պակասութիւնները, որոնց նա առաջ շրջայլութիւն էր համարում: Նա այժմ ամօթ էր համարում ման գալ չթէ շրջազգեստով, չունենալ մի քանի գլխարկ, չը

զարդարել իր սենեակը մի քանի աւելորդ բաներով և այլն։

Հեղինէի նոր ընկերուհիները ոչինչ չըգիտէին նրա անցած կեանքի մասին և ինքն էլ ամենայն կերպ աշխատում էր դաղտնի պահել. նրանք ընդհատեցին իրանց նախկին ծանօթների հետ տեսակցել, որպէս զի որքան կարելի է՝ Հեղինէն շուտ բարեկրթուի։ Նրա համար հրաւիրեցին երկու մանկավարժուհի՝ մի ֆրանսուհի և մի գերմանուհի, հրաւիրեցին նոյնպէս պարի և երաժշտութեան ուսուցիչներ։ Կատարինէն էլ իր կողմից բոլոր ուժով աշխատում էր իր ծանօթ տիկնանց նմանուել. թէ հագնելով, թէ խօսելով և շարժմունքներով. երբ նա կառքով զբօսնում էր աղջկայ հետ Նեւսկի փողոցով, ոչ ոք չէր հաւատալ եթէ ասէիք, որ մի քանի ամիս առաջ նրանք ցրտից դողդում էին մի յետ ընկած տնակում և մի ռուբլի անգամ չունէին հանդուգնեալ Պետրոսի համար դեղ առնելու։ Ընտանիքի մէջ ծախսը օրէցօր աւելանում էր։ Ծառանգուհին այնքան շատ էր, որ նրանք երևակայել անգամ չէին կարող։ Գրիգորն ամսական այնքան եկամուտ ունէր, որ նրանով առաջ կարող էին հինգ տարի ապրել. բայց այժմ հագիւ էր կարողանում տնային բոլոր անհրաժեշտ ծախսերը ծածկել։ Նրա մտքով չէր էլ անցնում օգնել կարօտեալներին, որոնք տանջւում էին աղքատութեան մէջ, ինչպէս ինքն էր առաջ տանջւում։

—Բաւական է, ինչքան նեղութիւն կրեցինք, հիմայ հարկաւոր է և մեզ ապրել մեր բաւականութեան համար, ասում էր Կատարինէն և մարդն էլ համամտրճիք էր նրա հետ։ Միևնոյն ժամանակ նրանք պատրաստ էին իրանց եկամուտի մնացորդից աղքատներին էլ բաժին տալ, բայց յաւն այն էր, որ այդ մնացորդը չէր լինում և չէր էլ կարող մնալ, որովհետև ինչ որ երեկ շռայլութիւն էին համարում՝ այսօր պահանջ էր դառել, իսկ վաղը անհրաժեշտութիւն կըդառնար։

Հեղինէն իր կողմից միշտ պատրաստ էր խեղճերին օգնելու, երբ նա փողոցում աղքատների էր հանդիպում. իր մօտ ունեցած բոլոր մանր փողը բաժանում էր նրանց։ Սմեն ժամանակ նա զբաղուած էր, կամ զբօսնում էր և կամ հիւ-

ըեր էր ընդունում։ Բայց երբեմն ամենաուրախ ժամանակն էլ, որը շուտ շուտ էր լինում, յանկարծ տխրում էր իր հանգուցեալ եղբօրը մտաբերելով, զառանցանքի մէջ ընկած թշուառ եղբօր դէմքը պատկերանում էր նրա աչքի առաջ և նա յանկարծ գունատւում էր և երկար լուռ մնում։ Հայրը այս բանը նկատում էր. նա հասկանում էր, որ եղբօր յիշատակը քրոջ վրայ ծանր ազդեցութիւն էր թողել. խնդրում էր վարժուհիներին, որ նրան զբաղեցնեն, որպէս զի մտածելու ժամանակ չունենայ։ Հազիւ բոյն էր դնում Հեղինէի հոգում անցեալ տանջանքների յիշողութիւնը, մանկավարժուհիները աշխատում էին նրան զուարճացնել, ցրել նրա ծանր մտքերը և ստիպել որ նա անհոգ խնդայ ու ծիծաղի և հետաքրքրուի ամեն չնչին բաներով։

Փոքրիկ Պետրոսի մահուանից յետոյ անցել էր համարեա երկու տարի։ Առաջին տարին հարստացած ընտանիքը այնքան զբաղուած էր զանազան գործերով և հոգսերով, որ մոռացաւ ծննդեան տօնը կատարել, իսկ այժմ Գրիգորը վճռեց յետ չդմնալ իր ծանօթներից և սարքել մանկան երեկոյթ՝ շքեղ տօնածառով։ Այս մեծ երեկոյթն առաջին անգամ էր, որ տալիս էին իրանց նոր ծանօթներին, այս պատճառով ահագին պատրաստութիւն էին տեսնում։ Տան մէջ շատ բան փոփոխեցին, նորոգեցին և աւելի գեղեցկացրին. հիանալի տօնածառ պատրաստեցին, նոյնպէս ընտիր ընծաներ փոքրիկ հիւրերի համար. այս բոլորի պատրաստութիւնն այնքան էլ հեշտ չէր նրանց համար։ Համարեա մի ամբողջ ամիս Հեղինէն մօր հետ ման էր գալիս խանութից խանութ առնելիքների համար. իսկ խօսակցութեան նիւթը դարձրել էին միայն իրանց երեկոյթը։ Եւ ուղիղ, որ այդ երեկոյթը շատ լաւ անցաւ։ Թէև Հեղինէն էլ մասնակցում էր տօնածառի ճոխ զարդարելուն, բայց միևնոյն ժամանակ չէր կարողանում անտարբեր մնալ, նայելով հարիւրաւոր կրակներով փայլող մեծաշուք ծառին. նա ուրախութիւնից ճչում և ազաղակներ էր բարձրացնում։

Եկան բազմաթիւ հիւրերը. բոլորն էլ լաւ հագնուած և ուրախ։ Հասակաւորները գովում էին տան զարգարանքը

և տանտիրոջ հիւրասիրութիւնը. իսկ երեխաները հաւաքուել էին Հեղինէի շուրջը, զուարճանում էին տօնածառով, ստացած ընծաներով և անդադար խօսում ու ծիծաղում էին: Վերջապէս միւս սենեակից լսուեց երաժշտութիւնը և սկսեցին եւրոպական պարերը. դրան մասնակցեցին և հասակաւոր պար սիրողները: Կատարինէն բոլորովին գոհ նստած էր հիւրասենեակում և խօսակցում էր տիկինների հետ: Գրիգորը մտնելով սենեակից սենեակ՝ ուշադրութիւն էր դարձնում, որ բոլոր հիւրերը ուրախ լինեն: Հեղինէն, չընայելով որ առաջին անգամ էր այսքան բազմութեան մէջ պարում, բոլորին զարմացնում էր իր թեթև շարժումներով, և շարունակ պարում էր: Ալբիկը իրան բոլորովին բախտաւոր էր զգում, նրա մշտական գունատ դէմքը այժմ կարմրել էր. նա թրջկոտում էր թռչնակի թեթևութեամբ և միշտ լսում էր նրա ուրախ ծիծաղի ձայնը:

Երեկոյթը տևեց մինչև առաւօտեան ժամի 3-ը: Վերջապէս բոլոր հիւրերը ցրուեցան: Հեղինէն շատ յոգնել էր պարելուց, այս պատճառով շտապեց իր ննջարանը քնելու: Հանուելուց առաջ նա նստեց բազկաթոռի վրայ, որ մի քիչ հանգստանայ, բայց չէր կարողանում հանգստանալ, այնպէս շոգում էր, որ իրան թւում էր թէ կրակի մէջ է: Նա ուզում էր հովանալ. վերկացաւ տեղից, բացեց լուսամուտի վարագոյրը և ճակատը կպցրեց սառը ապակուն: Փողոցներում խորին լռութիւն էր տիրում, միայն երբեմն կառքեր էին անցկենում: Այն ուրախութիւնից և աղմուկից յետոյ, որ ինքը շրջապատուած էր մի քանի րոպէ առաջ, հիմայ նրան դուր էր գալիս այս լռութիւնը:

Փողոցի ամենայն կողմը նայելով, նրա հայեացքը յանկարծ ընկաւ դիմացի տան ներքին յարկիլ ուսամուտին, որտեղից աղօտ լոյս էր նշմարւում:

—Կարծես փոքրիկ մեղրամոմի լոյս լինի, այս ինչ կընշանակէ. այո՛, այո՛, մեղրամոմ է—մէկ, երկու... Հեղինէն գունաթափուեց և պատուհանից հեռացաւ:

—Իսկուհի, կանչեց աղախնուն, նայեցէք, այնտեղ ինչ կայ, այն ինչ լոյս է:

—Ոչինչ, օրիորդ, պատասխանեց աղախինը անհոգ կերպով, երևի կօշկակարի տղան մեռել է և այն մոմերը նրա դագաղի մօտ վառել են: Առաւօտեան ես լսեցի, որ այդ կօշկակարը մեկի մօտ լայ էր լինում և գանգատւում էր, որ իր տղան շատ հիւանդ է, իսկ ինքը միջոցներ չունի բժշկելու:

—Ինչո՞ւ այդ բանն ինձ չասացիր, Իսկուհի, դու գիտեիր որ ես փող ունեի և նրան կըտայի:

—Ես չըհամարձակուեցայ ձեզ անհանգստացնել, օրիորդ, դուք զբաղուած էիք: Բայց նրա համար լաւ էր որ մեռաւ: Աւելի լաւ է փոքրը մեռնի, քան թէ ապրի թշուառութեան և աղքատութեան մէջ:

Հեղինէն լսած էր սրա նման մի կարծիք: Աստուած իմ, այս կարծիքը յայտնել էր իր հայրը Պետրոսի մահուան օրը: Նա ահա, նրա երևակայութեան մէջ պարզ նկարուեցաւ անյեալի ամբողջ պատկերը. սառ, խոնաւ և մութ բնակարանը, երեխայի փոքրիկ մարմինը հին շորերով փաթաթուած և նա՝ ինքը քաղցած ու սառած անդամներով, ձեռքը մեկնած հարուստներին և նրանց օգնութիւնից մերժուած:

—Եւ այս տղան,—նրա հայեացքը ակամայ ընկաւ դագաղի մօտ վառած մոմերի վրայ,—նա նոյնպէս մեռաւ աղքատութիւնից, նա մեռաւ, որովհետև հայրը փող չունէր նրա համար դեղ առնելու: Նրանք փող չունէին, իսկ այս ապրանքները, որ յիսուն ռուբլի արժէ, չէ՞ որ նրանց ամէն պէտքերին կըբաւէր:

Նա լուռ հանել տուեց շորերը և պառկեց. էլ չընկատեց թէ ինչպէս աղախինը կարգով դարսեց իր շորերը, վառեց գիշերուայ փոքրիկ լամպարը և զգոյշ քայլերով դուրս գնաց սենեակից, վախենալով որ իր տիրուհուն չըզարթեցնէ: Հեղինէի գլխի մէջ պտտւում էին ամենաճանր մտքեր, որոնց հետևում էին սարսափելի երազներ. նրան թուում էր թէ ինքը մարդասպան է, նա սպանեց այդ խեղճ տղային. գուցէ նա հօր միակ զաւակն էր, միակ յոյսը: Չէ, ինչպէս կարելի է. չէ որ ինքը ոչինչ չէր իմանում՝ ո՛չ այդ երեխայի մասին, ո՛չ նրա աղքատութեան և ո՛չ նրա հիւանդութեան մասին. չէր իմանում, բայց ինչո՞ւ. այն պատճառով որ-

դեօք, որ ինքը ոչինչ չէր ուզում գիտենալ նրա մասին։ Նա այդ երկու տարուայ ընթացքում, արդեօք հետաքրքրուել էր այն տնակներում ապրող մարդկանց ճակատագրով, ինչպիսի դրութեան մէջ մահացաւ իր եղբայրը։ Նա երբ և իցէ, արդեօք ուշադրութիւն դարձրել էր կօշկակարների, լուացք անողների և առհասարակ բոլոր աղքատների վրայ, որոնց մօտով նա անց էր կենում փողոցներում մանգալիս, գգուշանալով որ իր թանկագին շրջազգեստը չկեղտոտուէ նրանց քսուելով։ Առնելով իր համար որ և է թանկագին բան, արդեօք անցել է նրա մտքով, որ աւելի լաւ էր այդ փողը գործ ածէր՝ քաղցածներին, հիւանդներին և չունեցողներին օգնելու։ Ուրիշ երեխաներ էլ անհոգ վայելում են իրանց ծնողների հարստութիւնը, բայց այդ ուրիշները չգիտեն, գուցէ և չեն էլ կարողանում երևակայել թէ ինչ բան է խեղճութիւնը. իսկ նա,—նա ինքը չէ՞ որ փորձել էր այդ խեղճութիւնը. նա գիտէր թէ ինչ բան է քաղցածութիւնը, ցուրտը, հիւանդի հառաչանքները, որի տանջանքներին չես կարողանում թեթևութիւն տալ։

Հեղինէի աչքի առաջ ներկայացաւ առաջուայ բոլոր հարևանների և ծանօթների թշուառ կեանքը. նա յիշեց պառաւ նուագածուհին, որը վերադառնում էր երեկոյեանները հիւանդ և յոգնած, բերելով մի քանի կոպէկ՝ իր քաղցած երեք երեխաներին կերակրելու համար. նա մտաբերեց երիտասարդ կար անող կնոջը, որ աշխատում էր անդադար իր մօր հետ և որը կուրացել էր մութ սենեակում երկար կար անելուց. նա մտաբերեց այն երկու երեխաներին, որոնց հետ ինքը և Պետրոսը սիրում էին խաղալ և որոնց սոսկալի կերպով ծեծում էր նրանց պառաւ տատը, եթէ նրանք երեկոյեանները տուն վերադառնալիս քիչ փող էին տալիս նրան։ Այն հին յիշատակները, որ այնքան աշխատել էր մոռանալ, այժմ կանգնած էին իր աչքի առջև, ինչպէս կենդանի ուրուականներ. այդ ամենը նախատանքով նայում էին նրա վերայ և ինքն էլ նրանց առջև յանցաւոր էր զգում իրան և ընկճւում։

Հեղինէն այդ գիշերը երկար չկարողացաւ քնել, միայն

լուսաբացին նրա յոգնած աչքերը փակուեցան, բայց նրա քունը շատ ծանր էր և անհանգիստ։

—

Անցաւ երկու տարի։ Քաղաքի ամենահանդարտ փողոցներից մինում կառուցած փոքրիկ տնակը իր պարտէզով գրաւում է ամեն մեկի ուշադրութիւնը։ Հեղինէն այստեղ է լուսացնում գիշերները հիւանդ երեխաներին խնամելիս..... Այս հիւանդանոցը, որ հիմնել էր Հեղինէն հիւանդ երեխաների համար, շատ և շատ երեխաների է ազատել մահից...

Փոխադր. ՕՐ. Մ. ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆ



# ՇՈՒՇԱՆՆԵՐ

## I

Էս այցելեցի Անիի աւերակներին։—Պարերն իրանց փառքով ու վայելով, լացով ու կոծով, արհաւիրքով ու ցասումով, ինչպէս սուսերները, անցել-լողացել են պանծալի քաղաքի վրայով։ Ամեն ինչ դադարել է այնտեղ —էլ չըկայ կեանքի կատաղի կռիւ, հզօր մարդերի լանչի որոտներ, տառապեալների հեծծանք ու արցունք...

Այնտեղ մնացել է միայն փառահեղութեան մրուրը— ցիրուցան, թախծալի բեկորները...

—Այդ մեռած դարերի, մարած կեանքի ոսկերափքն են։

Համբոյր աւերակների մամռոտ կոյտերին, արցունք փլատակների արևառ փշրանքներին...

Եւ ես համբուրեցի ու թրջեցի աւեր Անիի մոռացած նշխարհները... և մի բուռն հող—անցած դարերի, մեռած մարդերի, լռած քաղաքի ճակնից—վերցրեցի ինձ հետ,—այդ հայրենիքի աւեր երկրի անգին յիշատակն է տարագիր որդու համար...

## II

Մառն էր։ Մայրական գրկից, հայրական օճախից պոկուած՝ ես գնում էի հեռու, շատ հեռու երկիր, ուր ամեն ինչ խորթ էր ինձ համար...

Ահա հայրենիքիս կապոյտ լեռները սև՛ին են տալիս... և ես նրանց լռիկ ծոցումն եմ։

—Հայրենիքին կարօտող սրտիս մի նուէր տուէք, լեռնե՛ր, վէս լեռնե՛ր... և ժայռի ստուերում դողդողացդ ծերուկ-դալուկ շուշանը. ես խոնարհուեցի, քնքշութեամբ քաղեցի նրան, դրեցի բաբախող կրծքիս վրայ...

Անցայ լեռները—անցայ հայրենիքիս սահմանակալ հըսկայ պահնորդները, ինձ հետ տանելով հայրենի-երկրի թանգագին յիշատակները—մի բուռն հողն ու թօշնած շուշանը...

Օտար աշխարհի մի խուլ ու խաղաղ անկիւնում ես ապրում եմ: Այնտեղ, ուր լարուած մտքերով թաղուում եմ գիտութեան անհունութեան մէջ՝ այնտեղ իմ առջև—գրքերի միջից աչքս է ծակում անշուք ծաղկամանը. նրա մէջ ես լցրել եմ հայրենիքիս մի բուռն հողը, որի մէջ թաղել եմ գունատ շուշանի սերմիկները... և նուիրական փոշին ես ցօղել եմ իմ կարօտավառ արցունքներով: Եւ այդ՝ անքուն գիշերների մենակութեան ու լռութեան մէջ:

Օրեր անցան—ահա դուրս եկան հողի կրծքից մեռած շուշանի մատաղ ծիլերը. իմ շնչով, իմ արցունքով նրանք աճեցին և այժմ սպիտակափառ շուշաններ են, որոնց բողբոջից կուսական սրբութեամբ փայլում են իրանց ջինջ աչիկները:

Անձուկ սենեակս նրանք լցրել են անուշ ամբրոսով և ես սուզուած եմ այդ խնկաբոյր ծովում:

## III

Ի գիշեր՝ հոգիս սիրով ու կարօտով լի, վշտով ու ըղձով լի—նայեցի նազիկ շուշաններին... և սիրտս՝ ինչպէս ամպ, փղձկաց, ջերմ արցունքներս հեղեղեցին հեզիկ ծաղիկները, որոնց բուրմունքով արբած՝ սրբազան յուզմունքով լուռել էի նրանց մեղմ աչիկներում... և ահա ականջս գգուեց երկնային հնչիւններ...

—«Մեր մայրը ծնուել է այնտե՛ղ, ուր երկինքն անամպ է, հովն ու ջուրն անուշ. նա ծնուել է հայրենիքի գրկում և թօշնել է հարազատներից հեռու, հայրենակցի ձեռքով

*Հայրենի հողում... Փառունակ կեանքի որդիները մեռել են— փոշի են դարձել վեհապանծ քաղաքի հետ... մենք ապրում ենք այդ սրբազան փոշու մէջ, մեզ սնուցանում է մի բուռն հողը — ոսկեվառ անցեալի աճիւնը...*

*Այսպէս — մենք վսեմ հայրերի շառաւիղներն ենք»:*

*Եւ լռեցին, նրանց գողտրիկ հնչիւնները երկար մէջոց թրթռում էին իմ ականջում:*

*— «Մենք ծլել ենք բազմակարօտ հայրենիքիդ թշուառ կրծքից, մենք նրա մարմնացած զգացմունքներն ենք, — նորից շշնջացին նրանք, — «ես հայրենիքիդ վիշտն եմ բուրում» մրմնջաց մէկը — մի մաքրաթիւ շուշան. — «ես էլ — նրա բոզոքը» — ես էլ — նրա գայրոյթը, ես էլ — նրա փափագը, ես էլ — նրա իղձը... վրայ թափուեցին ամեն կողմից ամօթխած շուշանները ձայնակցելով իրար... — «Իսկ մենք բոլորս միասին՝ կազմում ենք մի վսեմ լեզու»:*

*Եւ լռեցին, նազելի գլխիկները ծածկեցին մաքուր բողքոջով, գլխակը խոնարհուեցին, և երջանիկ նինջը նրանց ընդգրկեց...*

ԱԽԵՏ. ԻՍԱՀԱԿԵԱՆ



# ԳԻՏԱԿԱՆ ՋՐՈՑՅՆԵՐ

## ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

### IV

Ինչպէս անցեալ անգամ էլ խոստացանք, այստեղ մենք կրկին պիտի խօսենք այն կենդանիների մասին, որոնց առատաձեռն բնութիւնը չնորհել է շատ յարմար հագուստներ։ Պիտենք այս խորհրդաւոր դիմակահանդէսը, որտեղ ոչ միայն մի քանի կենդանիներ չեն կարողանում միմիանց ճանաչել, այլև խելօք մարդը յաճախ սխալւում է ու մոլորութեան մէջ ընկնում։ Եւ այստեղ զարմանալի ոչինչ չկայ, ոչ մի մարդ իր ամբողջ ճարտարութեամբ չէ կարող այնպէս լաւ, այնպէս կոկիկ դիմակաւորուել, ինչպէս այդ անում են մի քանի միջատները, առանց իրանց ցանկութեան և իրանք էլ չիմանալով թէ ինչ են անում։ Ինքներդ դատեցէք. մեզանից շատ հեռու գտնուող տաք երկիրներում, ուր արևի ճառագայթները կիզում ու այրում են ամեն բան, այդ երկիրների ճոխ ու հարուստ անտառների մէջ ապրում են. միլիոնաւոր գեղեցիկ թիթեռներ։ Նրանց գոյնզգոյն, գեղեցիկ հագուստը կամայ ակամայ գրաւում է մարդուս ուշադրութիւնը։ Երևակայեցէք ձեզ խոշոր ու մեծ մեծ մի քանի թիթեռներ, իրանց երկայն մարմնով և երկայն ու գոյնզգոյն թևերով, որոնցից մի քանիսը սպիտակ, միւսները չագանակագոյն և չատերն էլ սև գոյնի են և սպիտակ, դեղին ու կարմիր բծերով և կէտերով են ծածկուած։ Սրանց թևերի ներքնի կողմը նոյնպէս գեղեցիկ է, որքան և վերևի կողմը, այնպէս որ նստած ժամանակ, երբ նրանց թևերը ծալուած են լինում, դարձեալ իսկոյն աչքի են ընկնում այս հելիկոնիդ կոչուող թիթեռները։ Ահա հարիւրաւոր հելիկոնիդներ դանդաղ ու անճոռնի կերպով ճախրում են օդի մէջ, դժուարութեամբ ճեղքելով օդը իրանց երկայն գոյնզգոյն թևերով։ Հէնց այստեղ, նրանց չուրջը պատւում է միջատակեր թռչունների մեծ բազմութիւն, որոնք թռչելիս որսում ու իրանց ճանկն են գցում իրանց զոհերին։ Բայց հետաքրքիրն ու զարմանալին այստեղ այն է, որ հելիկոնիդներից համարեա ոչ մէկը չէ ընկնում այս ագահ դիշատիչների ճանկը. այն ինչ եթէ քննելու լինէինք դրանց ծոյլ ու դանդաղաշարժ թռչելուն նայելով, համարձակ կարելի էր ասել, որ հէնց դրանք են որ ամենից չուտ ընկնում են թռչունների ձեռքը և նրանց համար լաւ նախաճաշիկ դառնում։

Հազիւ, չատ հազիւ, հազարից մի անգամ է պատահում, որ անփորձ, նոր վերարաւորուած մի

թռչունի ճուտ թռչելու ժամանակ բռնում է գեղեցիկ թիթեռին, խլկոյն օդի մէջ կատարով անբաւականութեամբ այս ու այն կողմ քարշ տալով, վերջը դէն է ձգում նրան ոտնատակ արած, ճմլած և պատառոտած թևերով. այսպիսով խեղճ թիթեռը միայն նոր ազատ թողուած թռչնաձագի անփորձութեան զոհ դարձաւ։

Հետաքրքիր է իմանալ ի՞նչ է սրա պատճառը, դաղտնիքը ի՞նչումն է։ Ի՞նչու թռչուննները ձեռք չեն տալիս հելիկոնիդներին, որոնք արտաքուստ այդպէս ախորժակ են չարժում և որոնց բռնելը ոչ մի առանձին դժուարութիւն ու աշխատանք չէ պահանջում։ Ի՞նչու համար է այս այսպէս. նրա համար որ «մեն փայլող բան ոսկի չէ», նրա համար որ հելիկոնիդները գարշահոտ են և նրանց համը զզուելի. այս բանը չատ լաւ գիտեն թռչունները և այդ պատճառով էլ նրանք չեն հրապուրւում ոչ այդ թիթեռների մեծութիւնով և ոչ էլ նրանց դեղեցկութիւնով։ Այսպէս ուրեմն—հելիկոնիդները թռչնամիների յարձակմունքից ապահովուած, պաշտպանուած են, ոչ ոք չի դրաւուիլ նրանց գարշահոտ մսով։ Բայց մեր դիմակահանդէսը, կըհարցնէք դուք։ Սպասեցէք մի քիչ էլ, մենք կամաց կամաց հէնց դրա հերթին ենք ուզում հասնել։ Մի քանի հատ հելիկոնիդներ բռնելով, մենք զարմանալով կարող ենք տեսնել, որ նրանք բոլորը զզուելի հոտ չունին։ Վերցնում էք նրանցից մէկը, որ վատ հոտ չէ արձակում և ուշադրութեամբ դիտում, զննում էք նրան։ —Ձեր ձեռքին բռնած այդ թիթեռը կատարեալ հելիկոնիդ է, ունի նոյն երկայն թևերը՝ պայծառ ու գոյնզգոյն չիթերով ու բծերով, նոյն ծանր, դանդաղ թռիչքը։ Բայց... սպասեցէք. բանը նրանումն է, որ նմանութիւնն այսքանն է միայն, նրա փոքրիկ գլուխը, կուրծքը, չօշափուկները, ոտիկները բոլորովին այնպէս չեն, ինչպէս որ հելիկոնիդն ունի։

Եւ իրաւ. մեր խլկոյն բռնած թիթեռը, որ մենք ընդունեցինք հելիկոնիդի տեղ, բոլորովին գարշահոտ հելիկոնիդ չէ, այլ մի ուրիշ տեսակ թիթեռ, որ դիմակաւորուել է հելիկոնիդի հագուստներով միմիայն նրա համար, որ յիմար թռչունները ոչ միայն հանդիպած թողնեն նրան, այլև նոյնպիսի զգուանք տածեն դէպի նա, ինչպէս որ տածում են դէպի իսկական հելիկոնիդները։ Այստեղ վերջ տանք դիմակահանդիսին։

Ճշմարիտ որ զանազան կենդանիներ ամեն կերպ աշխատում են ապրել, և կեանք ունենալու համար ամեն տեսակ միջոցներ որոնել. մեկին բնութիւնը չնորհել է դիւրաստողներին զզուեցնող հոտ, իսկ միւսին թեև չէ բախտաւորացրել այս նախանձելի պարգևով, բայց միւս կողմից նրան ստիպել է հագնել այնպիսի չոր, որը խաբում, մոլորեցնում է ոչ միայն թիթեռամիս դիւրատող թռչուններին, այլ և «բնութեանն իշխող» հպարտ մարդուն...

Այնտեղ՝ ուր հելիկոնիդներ կան, պատահում են և այնպիսի բզեզ-

նեը, որոնք նման են կամ մեղուին, կամ իշամեղուին։ Այս բզեզներից մեկը որ ծածկուած է խիտ մազմըզուկներով, բոլորովին այնպիսի տեսք ունի, ինչպէս որ մեղուն, և որ ամենից զարմանալին է—այդ նրա փոքրիկ թաթիկներն են, որոնք ծածկուած են նոյն վրձինների, որ մեղուին ծառայում են ծաղիկներից փոշի հաւաքելու համար։

Մի ուրիշ բզեզ, որ երկայնաբեղ է կոչւում, նմանուելու գործում աւելի առաջ է գնացել. նրա երկար փորը ծածկուած է դեղին բծերով, որոնց չնորհիւ նա սաստիկ նմանւում է խայթոցաւոր իշամեղուին։ Ի հարկէ, աւելորդ է ասել, որ այդ երկու բզեզներն էլ այսպիսի հագուստի մէջ շատ լաւ պաշտպանւում են իրանց՝ որկրամոլ թռչուններից, որոնք այս բզեզներից առաջինին ընդունում են մեղուի, իսկ երկրորդին իշամեղուի տեղ, և վախենալով խայթուելուց, աւելի լաւ են համարում հանգիստ թողնել նրանց և ձեռք չը տալ։

Այստեղ ի դէպ պէտք է ասել, որ յիշած փոքրիկ երկայնաբեղբզեզների մէջ կայ այնպիսին, որ անհանգիստ կերպով շրջում է ծառերի բների վրայ մրջիւնների հետ միասին, որոնց նա իր տեսքով շատ նման է։ Թէ ինչն է նրան ստիպել մրջիւնին նմանուել—դժուար է ասել. բայց այսքանը կասենք, որ մրջիւնների բների մէջ մենք կարող ենք հանդիպել մի տեսակ փոքր սարդի, որ խեղդում է խեղճ մրջիւններին և նրանցով կերակրւում։ Ինչ կասէք, ընթերցող, չատ յարմար է չէ՞ իր զոհի հետ միատեղ ապրելը։ Սակայն սրա համար աւելորդ չէ միևնոյն ժամանակ և աննկատելի մնալ իր զոհի աչքերից։ Նա դուք ինչ էք կարծում։ Մեր պարոն սարդը, որ խորամանկ կերպով բոյն է դրել մրջիւնների բնակարանի մէջ, այնքան խիտ նման է մրջիւններին, որ վերջիններն ընդունում են նրան իրանց նման մի մրջիւնի և իրանց ընկերի տեղ, իսկ նա, այդ նենգ խորամանկը օգուտ է քաղում խեղճ միջատի այս բարեխիղճ վստահութիւնից և դաւաճանի պէս ուտում, ոչնչացնում է իր կեղծ ընկերակիցներին....

Շրջելու ժամանակ մի ուսումնական, յանկարծ իր ոտների տակ նկատեց մի մեծ օձաձագ։ Բայց ինչքան զարմացաւ նա, երբ մօտից զննելով այդ կենդանուն, տեսաւ որ նա բոլորովին օձաձագ չէր, այլ միմիայն թրթուր. իրաւ է չատ մեծ, երևելի թրթուր՝ բայց ոչ թէ թունաւոր օձաձագ, որին նա սաստիկ նմանւում էր թէ իր ձևով և թէ չարժուածքներով։ Նրա մարմնի առաջին մասի երկու կողմի վրայ նստած երկու մեծ, սև սև բծերը և կարճ թաթիկները, որոնց նա չատ յաջող կերպով արձակում ու կուչ էր ածում օձի պէս բարձրացնելով իր մարմնի առջևի մասը, այս բոլորն աւելի խիտ էին նմանեցնում այդ անվնաս թրթուրը թունաւոր սողունին...

Դուք, ի հարկէ, գիտէք որ օձերի մէջ չատ բազմաթիւ են այնպիսիները, որոնք բոլորովին ան-

վնաս են։ Թշնամիների հետ կըռուելու համար չունենալով այնպիսի լաւ միջոց, ինչպէս են սուր ու թունաւոր ատամները, չատ ոչ-թունաւոր օձեր ունին ինքնապաշտպանութեան ուրիշ միջոց։

Երկրագնդի նոյն տաք գօտիում, որտեղ մենք հանդիպեցինք հելիկոնիդների և նրանց նմանուող ուրիշ թիթեռների, կան նաև բազմաթիւ թունաւոր օձեր, որոնց կաշին ներկուած է պսպղուն գոյնզգոյն ներկերով։ Նրանց կաշին պայծառ-կարմիր գոյնի է և լայն լայն ու սև բծերով ծածկուած, որոնք բաժանւում են երկ-երկու կամ երեք երեք պայծառ դեղին գոյնի օղակաձև մասերի։ Այս թունաւոր օձերի հետ միասին բնակութիւն են հաստատել նաև ուրիշ, բոլորովին անվնաս օձեր, որոնց սակայն նրանցից զանազանելը ոչ մի կերպ կարելի չէ, որովհետև նրանք իրանց չափի գոյներով չատ խիստ նմանւում են թունաւորներին։ Այս օրինակը մեզ նորից ցոյց է տալիս, որ մի քանի կենդանիների գոյնզգոյն հագուստը ուրիշ կենդանիների — համար պաշտպանութեան միջոց է դառնում։ Ի հարկէ հաճելի է դեղեցիկ հագուստի միջոցով պաշտպանել իրան՝ վտանգներից և թշնամիներից։ Բայց կենդանիների կեանքում լինում է նաև ուրիշ տեսակ ձևափոխութիւն. նրանցից չատերը վտանգից խոյս տալու համար ստիպուած են ընդմիշտ բաժանուել իրանց հարուստ ծածկոցներից ու գեղեցիկ հագուստներից։

Եթէ դուք երբ և իցէ տեսել էք *սարեպի* ցեղի թըռչուններ, ի հարկէ անչուշտ կըզգիտենաք թէ նրանք ինչպիսի դեղեցիկ, ոսկեզօծ փետուրներով են զարդարուած։ Այն ինչ հէնց այս թռչունների մօտիկ ազգականները ստիպուած են եղել իրանց դեղեցիկ փետուրները փոխել տգեղ մռայլ ու միակերպ մուխ կարմիր կամ մոխրաւուն՝կանաչ գոյնի հագուստի։ Եւ ինչու համար։ Միմիայն նրա համար, որ իրանց գոյնով նմանուեն ուրիշ թռչուններին, որոնք ուժեղ ու խորամանկ թռչունների հռչակ ունին փետրաւոր թագաւորութեան գիշատողների չըջանում։

Եւ իրաւ. մի՞թէ ձեռնտու չէ, թոյլ ու վախկոտ արարած լինելով խորամանկի ու կռուասէրի հռչակ ունենալ, մի՞թէ հաճելի չէ մոլորութեան մէջ ձգել որ և է ագահ գիշատողին, որը կարծում է թէ դու նոյնպիսի ամուր ճանկեր ունես, նոյնպիսի երկայն, սուր ու կեռ կտուց, և նոյնպիսի կռուասէր ու խռովասէր արիւն, ինչպէս որ այն թռչունը, որի տեղ նա քեզ ընդունում է։ Այս հարցերի պատասխանը դուք ինքներդ տուէք, իսկ մենք հարկաւոր ենք համարում կատարել մեր վաղուց տուած խոստումները և բացատրել թէ ո՞րտեղից և ինչպէս են առաջ եկել բոլոր այն կենդանիները, որոնց մասին մենք խօսում էինք առաջուայ երկու դլուխների և ներկայ դլխի մէջ։ Նախ և առաջ աւելորդ չէ մի քանի կէտեր մտաբերել մեր անցեալ անդամներն ասածներից։ Իսկ

անցեալները մենք խօսում էինք ահա թէ ինչի մասին։

1) Այն կենդանիները, որոնք ապրում են սպիտակ, դարեւոր ձիւնով ծածկուած անբաւ ու անսահման դաշտերի մէջ, ամենից յաճախ սպիտակ գոյն են ունենում։

2) Այն կենդանիները, որոնք ապրում են բուսականութիւնից զուրկ, աւազոտ և քարքարոտ հարթութիւնների վրայ, մեծ մասամբ հագած ունին բաց-մոխրագոյն, բաց կարմիր կամ որ և է ուրիշ միատեսակ ազեղ գոյնի հագուստ։

3) Խոտաւէտ մարգագետինների և մշտական կանաչով ծածկուած անտառների բնակիչները ամենից յաճախ այնտեղի գոյնն ունին, ինչ տեղ անց են կացնում իրանց ողորմելի կեանքը. աւելի որոշ խօսելով՝ նրանց հագուստի գերադասող գոյնը կանաչ գոյնն է։

4) Մի քանի միջատներ, որոնք ապրում են կանաչ ծառերի ճիւղերի, չոր ոստերի ու տերեւների մէջ, զարմանալի կիրպով նման են այդ ճիւղերին, ոստերին և տերեւներին. և այդ պատճառով էլ անուանւում են երբեմն չրջող ոստեր, երբեմն կենդանի տերեւներ ու երբեմն էլ ձողեր։

5) Մի քանի միջատներ, օձեր և թռչուններ իրանց ձևով, գոյնով, չարժողութիւններով, մինչև անգամ սովորութիւններով չատ նման են ուրիշ կենդանիներին, որոնց հետ նրանք ոչ թէ մօտիկ ազգակցութիւն ունին, այլ հեռու ազգակցութիւնից անգամ զուրկ են։

Այս բոլորը, ինչպէս մենք մի քանի անգամ էլ ասել ենք, չատ ձեռնտու է կենդանիներին ընդհակառակ նրանց օգնում է հեռու պահել իրանց զոհին, թագնուել թշնամուց, աննկատելի մնալ հալածուող զոհի աչքերից և ի դէպ հանել չար գիշատողի յարձակումները։ Յաճախ մենք ասել ենք նոյնպէս որ այս կենդանիները իրանց ցանկութեամբ ու կամքով չեն նմանում չրջապատող իրերին, բոյսերին և ուրիշ կենդանիներին, նրանք իրանց բոլոր ցանկութիւններով այս գործում ոչ մի մասնակցութիւն չունին և այս բոլորը կատարւում է առանց նրանց կամքի ու գիտութեան։

Բայց ինչպէս է այս բանը տեղի ունենում. ահա թէ հարցը ինչումն է։ Փորձենք երկու ամենահասարակ օրինակներով բացատրել գործի էութիւնը և այնուհետև յայտով ենք որ մնացեալը ինքն իրան հասկանալի կըլինի։

Մարգագետնի վրայ, խիտ կանաչ խոտի մէջ թռչկոտում ու ճռուողում են մոխրագոյն, միխակագոյն, գեղին ու կանաչ գոյնի բազմաթիւ ճպուռներ։ Այս խեղճերը ամբողջ խմբերով միջատակեր թռչունների կերակուր են դառնում։

Ո՞նչ էք կարծում, այդ ճպուռներից որո՞նք են կենդանի մնալու մինչև ամառուայ վերջը, երբ էգ ճպուռները սկսում են ձու ածել։ Ի հարկէ նրանք, որոնք լաւ կարողանում են թագնուել կանաչ խոտի մէջ գիշատողի դիտող աչքերից. ի հարկէ կանաչ գոյնի ճպուռները, կարող էք պատասխա-

նել դուք և սխալուած չէք լինիլ։ Կենդանի մնացող ճպուռները ձու են ածում, իսկ հետևեալ գարնանը այդ ձուերից դուրս են գալիս անթիւ նոր ճպուռներ։

Այս նոր սերնդի մէջ կլինեն ամեն տեսակ գոյնի ճպուռներ թէ մոխրագոյն ու կանաչ և թէ դեղնագոյն, բայց կանաչ գոյնի ճպուռներն աւելի շատ կլինեն, որովհետև անցած տարուանից աւելի շատ թուով դրանք մնացին։ Այս կերպով տարէց տսրի կըշարունակուի ճպուռների բազմանալը մինչև որ կանաչ մարգագետինների գլխաւոր բնակիչները կըդառնան կանաչ գոյն ունեցող ճպուռները, այսինքն այնպիսիները, որոնց հագուստը աւելի լաւ է թագ կացնում նրանց կանաչ խոտի մէջ։ Ճշմարիտ է, որ և է բան ասելը հեշտ է, բայց գործը այնքան չուտ չէ գլուխ գալիս. կանցնեն հարիւրաւոր, հազարաւոր և նոյն իսկ տասնեակ հազարաւոր տարիներ, առաջ քան թէ կանաչ մարգագետինների բազմերանգ բնակիչները կամաց կամաց կ՚ոչնչանան և առաջնակարգ տեղը կըզիջանեն կանաչ գոյն ունեցողներին...

Ի՛նչ բան աւելի հետաքրքիր ու այնքան ուշադրութեան արժանի կարող է լինել ոչքան այն թիթեռը, որ նման է չոր տերևին. բայց այս դէպքումն էլ կարող ենք բացատրել թէ ինչպէս են առաջ եկել այդտեսակ թիթեռները։ Փորձենք։

Անտառի մէջ, օդում թռչկոտում են բազմաթիւ թիթեռներ, որոնց մէջ կան և՛ շատ գեղեցիկները և՛ վայլուն գոյն ունեցողները, և՛ պայծառ ու բազմերանգ հագուստ կրողներ. բայց նրանց թըւում կան նաև աւելի համեստ, աղօտ գոյնի հագուստ ունեցող թիթեռներ։

Մեկ էլ տեսնում ես այդպիսի գոյնզգոյն մի քանի թիթեռներ յանկարծ թառան դէպի չորացած թփերը և նստեցին նրանց վրայ, իրանց թևերը այնպէս ծալելով, ինչպէս այդ անում են առհասարակ բոլոր թիթեռները։ Դուք նըկատում էք, որ այդ թիթեռներից մի քանիսին թևերի տակի կողմը պայծառ գոյն ունի, իսկ մի քանիսինը ոչ, մինչդեռ՝ նրանցից մի քանիսի թևերի այդ կողմը նոյնպէս գոյնըզգոյն է ու դեղեցիկ, ինչպէս և վերևի կողմը, ուրիշ թիթեռների այդ կողմը փոքր ինչ աղօտ գոյն ունի և խլում է մոխրաւուն-դեղին գոյնի։

Մի քանի թռչուններ սրանց հեռուից նկատելով, դէպի այդ թուփերն են թռչում և սկսում բռնել նրանց, որոնք աւելի լաւ հագուստներ, աւելի պայծառ գոյնի թևեր ունին, որովհետև այդ թիթեռներըն աւելի չուտ են աչքի ընկնում, այն ինչ համեստ ու մութ գոյնի թևեր ունեցող թիթեռները աննըկատելի, ողջ ու անվնաս են մընում։ Այս վերջիններները ձու են ածում և սրանցից դուրս են գալիս այնպիսի թիթեռներ, որոնց թևերի ներքևի կողմը լինում է նոյնպիսի աղօտ և մութ գոյնի, ինչպէս որ էր նրանց ծնողներինը և երբեմն նոյն իսկ աւելի աղօտ ու բոլորովին նման չորացած տերևների գոյնին։ Այսպիսով սերունդից

սերունդ է անցնում Հաւելի սատկանում այս գոյնը, մինչև որ առաջ են գալիս այնպիսի թիթեռները, որոնք ծալուած թևերով կարծես թէ իսկական չոր տերևներ են։

Հէնց նոյն պատճառներով ժամանակի ընթացքում սկսում են երկայնանալ այս թիթեռների թեւերը, այնպէս որ վերջ ի վերջոյ նրանց երկայն ծայրերը ծալուած դրութեան մէջ՝ մենք պատրաստ ենք կանթի տեղ ընդունելու, որով տերևը ամրանում է ճիւղից։

Շատ, չափից դուրս շատ ժամանակ կ՚անցկենայ, առաջ քան թէ սովորական թիթեռի յատկորդ սերունդները կընմանուին չոր տերևներին. բայց այս բանն անպատճառ տեղի կունենայ, որովհետև չոր տերևների վրայ տալրող թիթեռների մէջ կապրեն և կրբազմանան գլխաւորապէս նրանք, որոնք թէ տեսքով և թէ գոյնով նմանւում են այդ թիթեռներին։

Վ. ԼՈՒՆԿԵՎԻՉ
Կ. ԳԻԻԼՆԱԶԱՐԵԱՆ

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

### ՉԻՆԱՑԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

*Չինացիների վարք ու բարքը շատ է տարբերւում մեր վարք ու բարքից, մեր սովորութիւններից։ Նրանք այս կամ դէպքում երբէք այնպէս չեն վարւում, ինչպէս մենք ենք վարւում. նրանք երբեմն այնպիսի մտքեր են յայտնում, որ մեր խելքին էլ չէին գալ։*

*Ահա ձեզ օրինակներ։*

*Չինացիներն իրար բարևելիս փոխանակ ասելու. «Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը», ասում են հետևեալը. «Ուրք ձեր փայ բրինձը կերաք, թէ չէ՞»։ Նրանք չեն ասում. «Առողջութիւն, յաջողութիւն», այլ՝ «մի՛ք շտապիլ»։*

*Չինացին երբ սկսում է խօսել ձեզ հետ, նա տեղեկանում է ոչ միայն ձեր առողջութեան մասին, այլ և՝ քանի՞ տարեկան էք, ի՞նչ ռոճիկ էք ստանում, որքան էք ծախսում և այլն և այլն։ Այդ բոլոր հարցերի առաջարկելը—նա համարում է քաղաքակրթութեան նշան, այն ինչ մենք այդ տեսակ հարց ու փորձը համարում ենք անտեղի և մինչև անգամ անքաղաքավարութիւն, եթէ մեր խօսակիցը մեզ*

շատ մօտիկ անձնաւորութիւն չէ: Բայց միւս կողմից՝ չինացուն երբէք չըպէտք է հարցնես նրա կնոջ, որդկերանց առողջութեան մասին կամ ուշադրութեան դարձնես նրա որդկերանց ծաղկած առողջութեան վրայ, հակառակ դէպքում, Աստուած մի արասցէ, եթէ նրանք կամ հիւանդանան, կամ մի փորձանք պատահի, խոյն քեզ կըմեղադրեն: Երբ մենք գլխարկը վերցնում ենք նրա տունը մտնելիս, նա ընդհակառակն, գլխարկը գլխին է դնում և փոխանակ ձեր ձեռքը սեղմելու, իր ձեռքն է սեղմում: Ձեզ իբրև պատուաւոր հիւրի՝ կընստացնի իր ձախ կողմը: Առանձին հպարտութեամբ ցոյց կըտայ մի քանի տախտակ, իր որ որդիքը նուիրել են իրան դաղաղի համար:

## ՀՈՎԱՆՈՑ ՇԻՆՈՂ ԿԱՊԻԿՆԵՐ

Աֆրիկայի խիտ անտառներում ապրող բազմատեսակ կապիկների մէջ կան շատ հետաքրքրական կապիկներ, որոնք ճիւղերից և տերևներից շինում են Հովանոցի նման մի ծածկոց, որի մէջ նրանք ապրում են: Մի օր մի ճանապարհորդ որս էր անում այդ անտառներում. նա նկատեց մի բարձր ծառի վրայ, որի տակով անց էր կենում, մի ինչ որ բան: Ճանապարհորդը մտածելով որ այդ տեղացոց մեկի տունն է, հարցրեց իր ընկերոջը, որը մի բնիկ աֆրիկացի էր: Որսորդները ծառերի վրայ քնելու սովորութիւն ունեն երկրի այս մասում:

—Այդ որ տեսնում էք, մարդ չի շինել, այլ մի որևէ կապիկի բոյն է, պատասխանեց աֆրիկացին:

Ճանապարհորդը զարմացաւ: Դրանից յետոյ նա տեսաւ այս հետաքրքրաշարժ կենդանիներից շատերին և նրանց բները մօտիկից քննեց. բները գետնից բարձր էին քան ոտից մինչև տասնուչորս ոտ: Կապիկն այսպիսի տեղ նրա համար է ընտրում, որ գիշերները վայրենի գազաններից ապահով լինի: Խելօք կենդանին իր հովանոցը կազմել էր տերևշատ ճիւղերից, ամուր կապելով ծառին ճկուն բոյսերով. թէ կապերը և թէ տանիքն այնպէս յարմարութեամբ էր

պատրաստել, որ ճանապարհորդը դժուարութեամբ էր հաւատում թէ մարդկային ձեռքը չի շինել այդ, մինչև վերջապէս մի օր, երբ նա զբօսնում էր՝ տեսաւ կապիկներից մեկին իր տանը—տերևուտ հովանոցի տակ։

—Ծեր կապիկներն ապրում են առանձնացած հովանոցների մէջ, ասաց մի ուրիշ անգամ նրան ֆրիկացին, ցոյց տալով մի քանի հովանոցներ, որոնց տակին հանգիստ նստել էին մազերը սպիտակած ու ատամները թափած մի մի կապիկ՝ ամուր բռնելով ճառից, իսկ ջահիլները միասին էին, նրանցից առանձին։

Միևնոյն ճանապարհորդը մի այդպիսի փոքրիկ կապիկ բռնեց, որը չընայած իր փոքրութեանը՝ կարողանում էր ման գալ։

Մի քանի օրից յետոյ նա այնքան ընտելացաւ, որ ուտում էր իր տիրոջ ձեռքից. նրա ուտելիքն էր պաքսիմատ, խաշած բրինձ, իսկ խմելիքը կաթ. սակայն շուտով երևացաւ որ փոքրիկ կապիկը գողութիւն շատ է սիրում։ Երբ որսորդները աննեակից բացակայ էին լինում՝ նա ներս էր մտնում և ինչ ուտելու բան որ գտնում էր՝ լափում էր։ Այդպիսի արարմունքների համար թէև նա շատ անգամ մտրակի համը տեսնելու դժբախտութիւն ունեցաւ, բայց ըզուր, նա գող ապրեց, գող էլ մեռաւ։

Փոքրիկ կապիկը խիստ շատ էր սիրում իր տիրոջ սուրճի համը տեսնել. իսկ եթէ սուրճը անշաքար էր, մօտ չէր գնում։

Նեգրների հետ ուտելը՝ նրան անչափ հաճոյք էր պատճառում. և երբ նեգրները նստում էին մի ման խաշած բրինձ կամ միս ուտելու՝ նա ևս հրճուելով մասնակցում էր նրանց սեղանին։ Բռնուելուց հինգ ամիս յետոյ, մի առաւօտ նա շատ հիւանդ էր երևում, այնպէս որ անտառային ամեն տեսակ կեռասները չըկերաւ. հետևեալ օրը նրան գերեզման տարան։

## Ա. Ն Ա. Ս Ո Ւ Ն Ն Ե Ր Ը Զ Օ Ր Ք Ի Մ Է Զ

Զարմանալի մարդ էր Փիլիպպոս զինուորը, բարեսիրտ էր, բայց սատանայութիւն էլ ուներ, հէնց այդ էր պատճառը, որ շուտ շուտ բանտարկում էին։ Աշխարհում ոչինչ չունէր բացի մի կատուից և աքաղաղից, որոնց երաժշտութեամբ

պարել սովորացրեց. մի շրի ունէր, որի վրայ շատ յաջող էր ածում։ Ամբողջ գօրանոցին ուրախացնողը՝ նա էր. «Ապա՛, փիշիկ, Բողարը, եկէք այստեղ». այդպէս էր կանչում նա իր պարեկողներին։ Այն րոպէին երկուսն էլ գօրանոցի հրապարակն էին դուրս գալիս, իսկ Փիլիպպոսը շրի ածելն էր սկսում։ Ա՛յ, պար են գալիս. կատուն յետի ոտների վրայ մանէ գալիս, թռչում և գլուխ կոնձի տալիս։ Իսկ աքաղաղը — օհ, ով որ առաջին անգամ տեսնում էր նրա սատանայութիւնը՝ ծիծաղից թուլանում էր. ցանցառի նման գլուխը բարձրացրած՝ դուրս էր պրծնում և աչքերը չռում կարծես թէ մի բան կայ։ Թէ ոնց Փիլիպպոսը սովորացրեց սրանց, այդ ոչ ոքի յայտնի չէ։ Ամբողջ գօրքն այնպէս սիրեց այդ անասուններին, որ դրանք պատերազմի ժամանակ էլ փառաւորապէս բազմած էին բեռնակիր սայլերի վրայ։ Փիլիպպոսն էլ՝ ինչ ասել կուզի՝ դրանց որդկերանց նման սիրում էր։ Գօրանոցների մօտ մի տեղ կըպաւակեր և կրծքին կընստացնէր փիշիկին ու Բողարին, կարծես թէ զրոյց է ուզում անել նրանց հետ։ Այդ գօրքում կար և մի սովորցնովի շուն էլ։ Այդ շանն շատ անգամ շա-

նազգեստները էին հագցնում, որն անցնելով զինուորների մօտով՝ հաչում էր և մռմռում, ինչ որ զայրացած մեծաւորը։

## ՋՈՒԱՐՃԱԼԻՔ

### ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

21) Առաջ. Օր. Հ. Մ.
Առաջին վանկով սիրելի եմ
Անասնի թէ մարդկանց փոքրերին,
Բայց երկրորդ վանկով հրամայում եմ
Անխըտրաբար ես ամենին։
Ամբողջ բառը եթէ առանձին
Զոկ վանկերի բաժանած կարգան՝
Կըգտնայ փոքրիկ նախադասութիւն,
Որ գիծոտ մայրը միշտ վայելչանքով
Ասում է լացող սիրասուն մանկան։
Բայց անբաժան
Նա է դոյական,
Աւետաբերը
Զարթնող ընութեան։

---

22) Առաջին տառը նման է
Փոքր աղջկայ աչքերին,
Երկրորդ տառը նստած է
Մարդու պէս յատակին,
Իսկ ամբողջը թէ ինչի՝
Ուզում է ձեզ խայթի։

## ՄԻ ՀԱՍԱՐԱԿ ԹՈՒԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

23) *Եօթ թերթ թուղթ բաժանեցէք տասերկու աշակերտի այնպէս, որ ոչ մի թերթը չբաժանուի 12 մասի։*

## ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԼՑՆԵԼ ԲԱԺԱԿԸ ՋԱՆԱՋԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐՈՎ

24) *Բաժակի մէջ նախ և առաջ պէտք է ածել սև (առանց կաթի), քաղցր և սառը սուրճ (ղահւա)։ Այնուհետև պատրաստել թղթից մի քանի փոքրիկ ձագար ճիշտ այն ձևով, ինչպէս մրգավաճառները մրգի համար ձեռքով պարկեր են շինում, միայն փոխանակ սուր ծայրը ծալելու, այդ ձագարների կողքերը պէտք է ամրացնել քորոցով կամ կպցնել սոսինձով, լափով և այլն։ Սուր ծայրը պէտք է թեքել և մկրատով մի փոքր կտրել։ Այդ ձագարներից մէկի սուր ծայրը պէտք է մօտեցնել բաժակի կողքերին և զգուշութեամբ նրա միջոցով ջուր ածել բաժակի մէջ, ապա մի նոր ձագարով միևնոյն կերպով ածել կարմիր գինի, վերջապէս՝ վերևից դարձեալ նոր ձագարով ցքի (սպիրտ)։ Հեղուկների շերտերը մօտաւորապէս միևնոյն բարձրութիւնը պէտք է ունենան։*

*Զորս զանազան տեսակ հեղուկներով լցրած բաժակը գեղեցիկ տեսք ունի։ Փերձեցէք։*

*—Ի՞նչ պէտք է լինի պատճառը, որ այդ հեղուկները մի առ ժամանակ չեն խառնւում իրար հետ։*

## Բ Ա Ռ Ա Խ Ա Ղ

*Աղջի՛կ, լսիր, Անուշ,*
*Արա՛ բալին անուշ։*

*Ասում եմ ծառի բուն,*
*Ոչ թէ թռչնի բոյն։*

*Աչքերդ է գեղին,*
*Նայի՛ր հիւանդի գեղին։*

*Դէ կորի, ա՛ շուն,*
*Հրէս եկաւ աշուն։*

## ՄԻ ՎԱՐԺԱՊԵՏԻ ԴԱՍԸ ԻՐ ԱՇԱԿԵՐՏԻՆ

*Մի վարժապետ իր աշակերտի ականջից բռնելով՝ նըստացրեց նրան սեղանի մօտ և խիստ կերպով ասաց.*

*— Ինչ որ ասեմ, ինձ հետ կրկնիր: Խեղճ աշակերտը վախից դողդողաց, վարժապետը բաց արաւ դասը և սկսեց.*

*— Ա.սա «այբ»— ասաց նա իր աշակերտին ցոյց տալով ա տառը:*

*— Ա.սա այբ— կրկնեց աշակերտը:*

*— Մի՛ ասա «ասա», ասա՛ այբ,— գոչեց վարժապետը:*

*— Մի՛ ասա «ասա», ասա՛ այբ:*

*— Մի ասա «մի ասա ասա», ասա՛ այբ:*

*— Մի՛ ասա մի ասա ասա, ասա՛ այբ:*

*— Մի ասա «մի ասա մի ասա ասա», ասա՛ այբ:*

*— Մի ասա, մի ասա...— բայց երեխան այստեղ բոլորովին շփոթուեցաւ և սկսեց հեկեկալ:*

—

## ՓԱՅՏԵԱՅ ՕՐԱՑՈՑՆԵՐ

*Մօտ երկու երեք հարիւր տարի սրանից առաջ օրացոյցները շինում էին փայտից, նրան քառակուսի ձև տալով: Այդ քառակուսու իւրաքանչիւր կողմը ներկայացնում էր տարուայ 3 ամիսը, օրերը նշանակուած էին գծերով: Իւրաքանչիւր ամսուայ առաջին օրը— մի երկայն գիծ էր, կէրակին— հաստ գիծ, տօները ցոյց տալու համար գործ էին դրւում առանձին նշաններ. օրինակ Մկրտութիւնը— խաչ, Ա.ստուածածնայ տօնը— սիրտ և այլն:*

*Այդ տեսակ փոքրիկ օրացոյցներ յաճախ ամրացնում էին ձեռափայտի գլխին:*



*Նախընթաց № 4-ի հանելուկների բացատրութիւնը.*

17) Վան-դ-ակ. վանդակ:

18) Տրեխներ:

19) Զուգահեռական գծերը հաւասար են. ստուգելու համար թղթով կարելի է չափել գծերը:

20) Ա.ղջկայ հետ գնացողը իր հայրն էր:

Ժամանակ. Խմբ. Բժ. Դ. ԼԻՍԻՑԵԱՆ. Հրատ. Տ. Նազարեան.

**ԲԱՑԻԱՆ Է 1893 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄԵԱԿԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

**ՊԱՅՄԱՆՆԵՐ**

| ԱՂԲԻՒՐ | ՏԱՐԱԶ | ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ |
|---|---|---|
| 2 ռ. | 3 ռ. | 5 ռ. |

*Երկրորդ կիսամեակի նէերը կընտանան միայն նրանք, որոնք գրւում են ամբողջ տարւայ «Աղբիւրին» և կէս տարւայ «Տարազին», վճարելով 6 ռ. և ետքը երկու կոպ. մարկա:*

*„Տարազի“ սոյն թւի առաջին կիսամեակի համարները արժեն 2 ռուբլի, իսկ „Աղբիւրինը“ 1 ռուբլի:*

Հասցէ. Тифлисъ, редакція „Агбюръ—Таразъ“.